

Մխիթար Ռազմիկի Գաբրիելյան  
ազգագրագետ, պատմ. գիտ. թեկնածու

*Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության  
զարգացման սոցիալական և մշակութային բաղադրիչները.  
համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը, հողերի  
խոշորացման և կոոպերացիայի հիմնախնդիրները*

## Բովանդակություն

Գործադիր ամփոփում .....	3
Ներածություն .....	5
Հետազոտության կանխավարկածը, նպատակն ու խնդիրները.....	6
Մեթոդաբանություն .....	10
Գյուղատնտեսություն. իրավիճակ, զարգացման միտումներ, պետական քաղաքականություն.....	12
<i>Իրավիճակը և զարգացման միտումները.....</i>	12
<i>Համառոտ պատմություն.....</i>	16
<i>Հողային վերափոխումներ .....</i>	17
Գյուղական բնակչության սոցիալ-մշակութային բնութագիրը հողերի խոշորացման և կոոպերացիայի զարգացման համատեքստում .....	20
Տարածքային ու գոտիական առանձնահատկություններ՝ աջակից, թե խոչընդոտ .....	23
Հողերի խոշորացում և կոոպերացիա. քաղաքականություն ու փաստաթղթեր .....	26
<i>Հիմնական փաստաթղթեր .....</i>	26
<i>Իրական վիճակ. քաղաքականություն և ընկալումներ .....</i>	33
Եզրակացություններ .....	41
Առաջարկություններ.....	44
Գրականություն և հիմնական փաստաթղթեր .....	47

## Գործադիր ամփոփում

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության զարգացումը դիտվում է որպես գերակայություն: Վերջին մեկ-երկու տարում փոխվել է գյուղատնտեսության հանդեպ վերաբերմունքը, ակտիվացել է պետական քաղաքականությունը:

Գյուղատնտեսության հանդեպ ակտիվ քաղաքականության համատեքստում ակտիվորեն քարոզվում է հատկապես հողերի խոշորացման ու կոոպերացիայի զարգացման գործընթացը, մշակվել են այս գործընթացի իրագործման օրենսդրական ու նորմատիվային հիմքերը: 2011թ. տարբեր մարզերում արդեն ստեղծվել են գյուղատնտեսական կոոպերատիվներ, սակայն դեռևս վաղ է դրանց արդյունավետության մասին խոսելը, քանի որ վերջնական կայացման ու զարգացման համար պահանջվում է տևական ժամանակ:

Գործընթացի ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ այն միայն տնտեսական հիմքեր չէ, որ ունի: Գյուղացիությունը բավականին բարդ, շարժունակ, ներքին բազմազանություն ունեցող համակարգ է, հետևաբար արմատական փոփոխությունների հաջողությունը հնարավոր է ապահովել միայն համալիր, այդ թվում՝ սոցիալ-մշակութային գործոնների հաշվառմամբ: Իսկ դրանք, ըստ հետազոտության արդյունքների, դեռևս հակասական են, հաճախ՝ գյուղի ու գյուղացիության զարգացումները խոչընդոտող: Հայաստանյան գյուղը դեռևս չի հաղթահարել սեփականաշնորհման բացասական հետևանքները: Ավելին, ըստ տարբեր գնահատումների, գյուղատնտեսությունը՝ որպես համալիր, այսօր գտնվում են համակարգային ճգնաժամի մեջ և հենց սա է գյուղատնտեսական գործունեության ցածր արդյունավետության, գյուղական բնակչության ցածր կենսամակարդակի, որոշ դեպքերում՝ գյուղատնտեսական զբաղմունքներից օտարվածության պատճառը:

Հողերի խոշորացումն ու կոոպերացիայի զարգացումը կարող են դառնալ կարևոր քայլ ճգնաժամի հաղթահարման ու գյուղատնտեսության զարգացման ճանապարհին: Այս իրողությունը ընդունում են նաև անհատական գյուղացիական տնտեսությունները: Հետազոտության ընթացքում, սակայն, արձանագրվեց նաև թեական վերաբերմունք, որի հիմքում բացի զուտ տնտեսական գործոններից, սոցիալ-մշակութային իրողություններ են ընկած: Հետազոտության մասնակիցների կարծիքով, ժողովրդագրական ճգնաժամի, բնակչության, հատկապես երիտասարդության զանգվածային արտահոսքի պայմաններում այսօր հնարավոր չէ միանգամից ապահովել հողերի խոշորացման ու կոոպերացիայի գործընթացների հաջողությունը:

Գյուղում չկա անհրաժեշտ կրիտիկական զանգված, որը կկարողանա հանդես գալ նախաձեռնողի ու միաժամանակ, գործընթացն առաջ տանողի դերում: Իսկ սա, իր հերթին լրացուցիչ վտանգներ պարունակող իրողություն է: Փորձագետների կարծիքով, խոշորացման ու կոոպերացիայի խրախուսման քաղաքականության արդյունքը կարող է լինել մոնոպոլիաների ձևավորումն ու զարգացումը նաև այս ոլորտում, ինչը իր հերթին, արտաաղթի ու արտագնացության նոր ալիք կձևավորի: Պետական քաղաքականության որոշ փաստաթղթերը նման մտահոգությունների հիմքեր տալիս են, քանի որ նախատեսում են արտոնյալ պայմաններով հողերի վարձակալության կամ գնման իրավունք, այսպիսով, սահմանափակելով անհատական գյուղացիական տնտեսությունների մեկնարկային ու զարգացման հնարավորությունները:

Հետևաբար, հողերի խոշորացման ու կոոպերացիայի գործընթացների հաջողությունն ապահովելու համար վերանայման կարիք ունեն փաստաթղթերի որոշ դրույթներ: Բացի դրանից, անհրաժեշտ է պետական քաղաքականության փաստաթղթերում հստակ ձևակերպել գյուղական բնակչության այն տեսլականը, որը պետք է դառնա քաղաքականության հիմքը: Փաստաթղթերի հիմնական մասում ձևակերպված է գյուղատնտեսության զարգացման տեսլականը, որը, սակայն, պարտադիր չէ որ նույնական լինի գյուղական բնակչության զարգացման տեսլականի հետ: Հենց այս մոտեցումից էլ բխում են պետական քաղաքականությունում առկա այն բացթողումները ու թյուրընկալումները, որոնք վերլուծված են տեքստում:

## Ներածություն

**Վ**երջին տարիերին, հիմնականում համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությամբ, փոխվել են ՀՀ տնտեսության զարգացումը բնութագրող գրեթե բոլոր, այդ թվում գյուղատնտեսական ցուցանիշները */ըստ պաշտոնական վիճակագրության աճել են պետական պարտքը, աղքատների ու ծայրահեղ աղքատների տեսակարար կշիռը<sup>1</sup>, բնակչության արտահոսքի ու արտագնացության ծավալները/*:

Միաժամանակ, հաշվի առնելով ճգնաժամի ազդեցություններն ու 2008-2010թթ. գյուղատնտեսության անկումային ցուցանիշները, իշխանությունները, ըստ էության, հայտարարել են գյուղատնտեսական քաղաքականության նոր գերակայությունների մասին՝ *հողերի խոշորացման ու գյուղատնտեսական կոոպերացիայի խթանում, գյուղատնտեսական գործունեության արդյունավետության աճ, մթերումների հիմնախնդիրների լուծում, գյուղացիական տնտեսություններին մատչելի գներով սերմացուի, պարարտանյութերի, վառելիքի մատակարարում և այլն<sup>2</sup>*:

---

<sup>1</sup>Ըստ ԱՎԾ տվյալների, հանրապետությունում աղքատ բնակչությունը կազմում է 34.1%, ծայրահեղ աղքատները՝ 3.6%: Քաղաքային բնակավայրերում աղքատների և ծայրահեղ աղքատների տեսակարար կշիռը կազմում է 4.6 և 33.7, գյուղական բնակավայրերում՝ համապատասխանաբար՝ 1.7 և 34.9%: Մանրամասն տես՝ *Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2011. Էջ 110*: Ցուցանիշների նման փոփոխությունը, ինչպես նշվում է պետական քաղաքականություն փաստաթղթերում, արդյունք է հիմնականում ճգնաժամի բացասական ազդեցությունների: Մեր կարծիքով, սակայն, կան նաև այլ պատճառներ: Դրանցից հիմնականը վերաբերում է աղքատության հաղթահարման գործիքներին, ինչպես նաև աղքատության հաշվառման ցուցանիշներին: Ֆինանսական ճգնաժամն ընդամենը ապացուցեց, որ աղքատության գծից վեր գտնվող բազմաթիվ ընտանիքներ իրականում շարունակում են մնալ խոցելի և աղքատների խմբում են հայտնվում ցանկացած անբարենպաստ փոփոխության դեպքում: Այսինքն, իրականում աղքատությունը Հայաստանում համակարգային, խորքային իրողություն է, որի հաղթահարումը պահանջում է համակարգային փոփոխություններ ու համալիր լուծումներ:

<sup>2</sup>Քաղաքականության գերակայությունների ընդհանրացնող գնահատականները տրվեցին վարչապետ Տ. Մարգարյանի հարցազրույցում՝ 2011թ. մարտի 27-ին: <Գյուղատնտեսությունը, բացի տնտեսական խնդիրներից, որի համար պետք է տնտեսապես շահավետ միջավայր ստեղծենք, նաև ունի լուրջ քաղաքական և սոցիալական բովանդակություն: Նամանավանդ, եթե հաշվի առնենք, որ մենք ունենք 340 հազար գյուղացիական փոքր տնտեսություն, և նրանց կողմից մշակվող հողերի ծավալը կազմում է 430 հազար հա: Այսինքն՝ 1 հա-ից մի քիչ ավելի է ընկնում ամեն մի տնտեսությանը. ապահովում է այդ տնտեսությունը զբաղվածություն և տարրական սոցիալական կարիքներ հոգալու հնարավորություն: Հասկանալի է, որ **պետությունը պետք է կանգնած լինի գյուղացու կողքին՝ օգնելու նրան լուծելու իր խնդիրը**: Այդ տեսակետից, մի կողմից մենք պետք է մտածենք **տնտեսական արդյունավետության բարձրացման** մասին, դրա համար փորձում ենք խթանել **կոոպերատիվների ձևավորումը**, որովհետև դրանք հնարավորություն են տալիս ավելի փոքր ծախսերով 15, 20 տնտեսություն սպասարկել՝ ունենալ գյուղտեխնիկա, ավելի էժան ձեռք բերել սերմացու, վառելիք և այլն: Մյուս կողմից էլ մենք հասկանում ենք, որ դրանով լուծում ենք **սոցիալական ու քաղաքական խնդիր**>: Հարցազրույցը տես՝ <http://www.gov.am/am/interviews/1/item/3130/> /վերջին այցելությունը 20.02. 2012/: Այս սկզբունքները գյուղատնտեսության հանդեպ կային ավելի վաղ, արձանագրված էին պետական քաղաքականության

Գյուղի սոցիալ-մշակութային զարգացման համատեքստում այս քաղաքականությունը պետք է հանգեցնի գյուղական բնակչության կենսամակարդակի աճին, գյուղի՝ որպես բնակության վայրի գրավչության բարձրացմանը, պահանջումներին բավարարման հնարավորությունների բազմազանեցմանը ենթակառուցվածքների զարգացման ճանապարհով, արտագաղթի ու արտագնացության միտումների աստիճանական հաղթահարմանը և այլն:

Այս միտումները, ինչպես նաև պետական քաղաքականության հակասական ընկալումներն ու իրարամերժ գնահատականները ընկած են հետազոտության կանխավարկածի հիմքում, որոշելով նաև նպատակն ու հիմնական հետազոտական խնդիրները:

## **Հետազոտության կանխավարկածը, նպատակն ու խնդիրները**

**Ի**րավիճակի նախնական վերլուծությունն ու գյուղատնտեսության զարգացման հիմնական միտումների, ինչպես նաև վիճակագրական ցուցանիշների հետ համադրումը հիմքեր տվեցին որպես հետազոտության կանխավարկած ձևակերպելու այն, որ *գյուղատնտեսական կոոպերացիան և հողերի խոշորացման գործընթացները՝ որպես գյուղատնտեսության զարգացման ապահովման կարևոր նախապայման և ՀՀ ագրարային քաղաքականության ներկա փուլի գերակայություն, միայն տնտեսական ուղղվածություն չէ, որ ունեն: Գործընթացի հաջողության համար կարևոր են հասարակական ու մշակութային բազմաթիվ գործոններ ու իրողություններ, որոնք պայմանավորում են գյուղի զարգացումը վերջին երկու տասնամյակում: Մակայն, դրանք ոչ միշտ են հաշվի առնվել ու առնվում գյուղի ու գյուղատնտեսության հանդեպ պետական քաղաքականությունում, այդ թվում՝ արդեն մշակված ու շրջանառության մեջ գտնվող փաստաթղթերում, ինչը կարող է դառնալ բարդությունների ու անհաջողությունների պատճառ<sup>3</sup>:*

*Սոցիալական ու մշակութային գործոնների հաշվառումը կարևոր է հատկապես համաշխարհային ֆինանսական ճգնաժամի դեռևս պահպանվող բացասական ազդեցությունների ու հետևանքների պայմաններում:*

---

փաստաթղթերում, սակայն <դեմքով դեպի գյուղն ու գյուղացին շրջվելը> վերջին մեկ-երկու տարվա երևույթ է:

<sup>3</sup>Նման մոտեցման ձևավորմանը նպաստել է նաև մեր մասնագիտական փորձառությունը, քանի որ վերջին երկու տասնամյակում հանրապետության շուրջ 250 գյուղական բնակավայրերում ազգագրական հետազոտությունները, որոնք վերաբերում են գյուղի սոցիալ-մշակութային փոխակերպումներին, ցույց են տալիս, որ հենց սոցիալական ու մշակութային գործոնների ոչ բավարար կարևորումն է հանգեցրել անցանկալի զարգացումների ու հիմնախնդիրների ձևավորմանը:

Հետազոտության կանխավարկածի նման ձևակերպմամբ գյուղական բնակչությունը դիտարկվում է ոչ թե որպես կայուն, ստատիկ ամբողջություն, այլ որպես ներքին բազմազանություն, հաճախ՝ հակասականություն ունեցող շարժունակ, սոցիալ-մասնագիտական, ունեցվածքային, կրթական ու այլ գործոնների հիմքի վրա կառուցված բարդ ու բազմամակարդակ համակարգ:

Ըստ այդմ, ***հետազոտության նպատակը գյուղատնտեսության ու գյուղական բնակչության զարգացումը պայմանավորող հիմնարար գործընթացներից մեկի՝ հողերի խոշորացման և գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման ներուժի և վերջիններիս բազային բաղադրիչների՝ սոցիալական ու մշակութային գործոնների ազդեցության ուսումնասիրությունն է:***

Սոցիալ-մշակութային գործոնների կարևորումը պայմանավորված է տարբեր հանգամանքներով: Վերջին երկու տասնամյակում գյուղի զարգացումը, բացի տնտեսականից, պայմանավորում են սոցիալական ու մշակութային գործոնները, որոնց ազդեցությունները տնտեսական գործընթացների վրա խորքային են, հաճախ՝ դժվար բացահայտելի, պահանջում են լուրջ մասնագիտական վերլուծություններ: Իրենց հերթին, այդ գործընթացները պայմանավորված են նաև տնտեսական զարգացումներով: Գյուղական համայնքը, որպես շարժունակ սոցիո-մշակութային օրգանիզմ, արձագանքում է տնտեսական զարգացումների դրական ու բացասական միտումներին ու ազդակներին, ձևավորում համարժեք վերաբերմունք: Սակայն, ինչն արձանագրվեց նաև ուսումնասիրությամբ, անբարենպաստ գործոնների ազդեցության պայմաններում թուլացել է գյուղի՝ որպես համայնքի կազմակերպման ու ինքնակազմակերպման, նաև՝ առկա զարգացումներին արձագանքելու ու հակազդելու ներուժը: Սա պայմանավորված է ժողովրդագրական անբարենպաստ իրավիճակով, երիտասարդության արտահոսքով, գյուղատնտեսական զբաղմունքների ցածր արդյունավետությամբ, ենթակառուցվածքների ոչ բավարար զարգացմամբ, կյանքի որակի բարելավման, որակյալ կրթության, առողջապահական, սոցիալական ու այլ ծառայությունների սահմանափակ հնարավորություններով:

Աղքատության բարձր մակարդակը, դրա հաղթահարման սահմանափակ հնարավորությունները գյուղական բնակչությանը պարտադրել են <գոյատևման ռազմավարություն>, որի պայմաններում, որպես կանոն, բավարարվում են բազային, նվազագույն կենսական պահանջմունքները, ընդ որում հաճախ արդի զարգացումներին անհարիր պայմաններում<sup>4</sup>: Գոյատևման ռազմավարության պայմաններում սահմանափակվում ու արհեստականորեն նվազեցվում է նաև

<sup>4</sup>Տարբեր գյուղերում նշվում էր, որ եթե մի քանի տարի առաջ առանձին ընտանիքներ անցել էին ջեռուցման ժամանակակից համակարգերի՝ <լոկալ ջեռուցման>, ապա ճգնաժամի ու գազի սակագների թանկացման պայմաններում շատերը ստիպված վերադարձան <ավանդական> ցախին ու աթարին:

կենսական պահանջմունքների շեմը, երբ նույնիսկ տարրական կարիքների բավարարումը համարվում է հաջողություն առանձին ընտանիքների համար: Այս իրողությունները խորացել են ֆինանսական ճգնաժամի պայմաններում, երբ հատկապես առաջին փուլում իշխանությունները ստիպված էին հրաժարվել գյուղատնտեսական տարբեր ծրագրերից, կարևորելով սոցիալական խնդիրների լուծումը՝ կենսաթոշակների, աշխատավարձերի ժամանակին վճարում, աղքատ ընտանիքներին նպաստների հատկացում և այլն:

Սոցիալական ու մշակութային գործոնները կարևոր են նաև տարածքային ու գոտիական առանձնահատկությունների դիտարկման տեսանկյունից: Գյուղական բնակչությունն այսօր ունի շուկայական հարաբերությունների ոլորտ ներգրավվելու, հետևաբար՝ հողերի խոշորացման ու կոոպերացիայի տարբեր ներուժ ու հնարավորություններ: Արարատյան դաշտի ու հարակից մի քանի մարզերի /Արագածոտն, Կոտայք, Արմավիր/ գյուղերն ավանդաբար ակտիվ են ներգրավված եղել շուկայական հարաբերություններում, հիմնականում Երևանին մոտ գտնվելու պատճառով: Նման մեկնարկային առավելություններ ունեին նաև Շիրակի ու Լոռու մարզի որոշ գյուղեր, որոնց համար իրացման շուկան Գյումրին ու Վանաձորն էին, սակայն վիճակի վատթարացմանը զուգընթաց կրճատվեցին նաև այդ հնարավորությունները:

Բարձրլեռնային, սահմանամերձ ու հեռավոր գյուղական բնակավայրերում արդեն տնտեսության ապրանքայնացման ու շուկայական հարաբերությունների զարգացման հնարավորությունները սահմանափակ են: Այս գյուղերում տնտեսությունը **կիսանատուրալ է**, երբ արտադրված մթերքի հիմնական մասը սպառվում է տնտեսությունում կամ իրացվում պարզ ապրանքափոխանակությամբ: Ակնհայտ է, որ այս պայմաններում հողերի խոշորացման ու կոոպերացիայի զարգացման հնարավորություններն ու ներուժը չեն կարող նույնը լինել, ինչը ապացուցվեց նաև հետազոտության ընթացքում:

Այս գործոնները հաշվի առնելով, ձևակերպվեցին հետազոտության հիմնական խնդիրները.

✓ Գյուղատնտեսության, գյուղի ու գյուղական բնակչության արդի վիճակն ու զարգացման միտումները պայմանավորող **սոցիալական բաղադրիչների ուսումնասիրություն:** Համայնքային հարթությունում կազմակերպման ու ինքնակազմակերպման այն եղանակները, որոնք բնորոշ էին խորհրդային գյուղին, ենթարկվել են էական փոփոխությունների, հետևաբար, դրանց ամբողջական դիտարկման, պատճառների, հետևանքների ու ազդեցությունների ուսումնասիրության պայմաններում է միայն հնարավոր բացահայտել ու խթանել



գյուղի, համայնքի այն ներուժը, որը կապահովի խոշորացման ու կոոպերացիայի խթանման գործընթացը: Որպես հնարավոր խոչընդոտներ դիտարկվել են գյուղական բնակչության ակտիվության, ինքնակազմակերպման ու համայնքային հարթությունում որոշումների ընդունման ներուժի սահմանափակումը / թուլացումը, համայնքային կառավարման մեխանիկական մեթոդների տարածվածությունը, գյուղատնտեսության կազմակերպումը հիմնականում անհատական գյուղացիական տնտեսությունների, լավագույն դեպքում՝ սահմանափակ թվով ազգականների կամ դրացիների մակարդակում<sup>5</sup>:

✓ Գյուղատնտեսության, գյուղի ու գյուղական բնակչության վիճակն ու զարգացման միտումները պայմանավորող ***մշակութային քաղաքիչների ուսումնասիրություն***: Արդի հայաստանյան գյուղը հակասական իրողությունների ու գործընթացների յուրօրինակ սինթեզ է: Դրանց մի մասը խոչընդոտում է գյուղի ակտիվ, ստեղծագործական զարգացմանը: Հենց այս գործոնների, դրանց պատճառների ու ազդեցությունների բացահայտումը հնարավորություն կտա արդյունավետ ու նպատակային դարձնել հողերի խոշորացման ու կոոպերացիայի քաղաքականությունը:

Առաջին՝ ***սոցիալական քաղաքիչի*** ուսումնասիրությունում առաձևացվել է մի քանի հիմնական ենթախնդիր.

- ***Անհատի***, անհատական գյուղացիական տնտեսության, մեծ հաշվով՝ հայ գյուղացու սոցիալական գործունեության հիմնական ձևերն ու եղանակները, դրանք պայմանավորող կողմնորոշիչներն ու պատկերացումները,
- ***Ընտանիքի***՝ որպես սոցիալական համագործակցության հիմնական միավորի բնութագիրն ու սոցիալական գործընթացներին մասնակցության եղանակները; օգնության ու փոխօգնության մեխանիզմները տարբեր մակարդակներում; գործունեության արդյունավետության բարձրացման մասին պատկերացումները; ստերեոտիպերը; հիմնական դերակատարների մասին պատկերացումները /իշխանություն, ՏԻ մարմիններ, գյուղական բնակչություն/, որոնք կարող են նպաստել ռլորտում փոփոխություններին,

<sup>5</sup>Ուշագրավ է, որ այս խնդրին բախվում են նաև գյուղական համայնքներում տարբեր ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունները: Հաճախ բարդ է նույնիսկ ժողովներ հրավիրելը՝ կոնկրետ հարցեր քննարկելու համար: Օտարվածությունը, անտարբերությունը հաճախ դառնում են վարքագիծ, գյուղացուն օտարելով համայնքային կյանքին մասնակցությունից ընդհանրապես:

- **Ազգակցական, դրացիական կոլեկտիվները** որպես սոցիալական ու տնտեսական գործունեության մասնակիցներ, համատեղ գործունեության ձևերն ու եղանակները, ոչ ֆորմալ կոոպերացիան գյուղատնտեսությունում,
- **Գյուղական համայնքը** որպես սոցիալական համագործակցության, օգնության ու փոխօգնության հիմնական սոցիոմշակութային տարածություն ու միջավայր;
- Սոցիալական համագործակցության եղանակները իշխանության մարմինների ու համայնքի միջև:

**Մշակութային** բաղադրիչում առանձնացվել են հետևյալ ենթախնդիրները

- Գյուղատնտեսական գործունեության կազմակերպման **մշակութային, արժեքային կողմնորոշումներն ու ստերեոտիպերը**, ավանդականն ու ժամանակակիցը դրանցում,

- Անկախության շրջանում կատարված **հիմնական փոփոխությունները**, տարբեր մոտեցումների գործառնության հիմնական պատճառները,

- **Պետության և կառավարման մարմինների ընկալումները**՝ կապված հողերի խոշորացման ու կոոպերացիայի քաղաքականության հետ:

Խնդիրների ու ենթախնդիրների նման շրջանակի առանձնացումը հնարավորություն տվեց ամբողջացնել հողերի խոշորացման ու կոոպերացիայի խթանման քաղաքականության սոցիալ-մշակութային առումներն ու հիմնախնդիրները:

## Մեթոդաբանություն



ռանձնացված նպատակը, ինչպես նաև խնդիրների հիմնական շրջանակը պայմանավորել են նաև հետազոտության մեթոդաբանության ընտրությունը:

Գյուղի զարգացումը պայմանավորող սոցիալական ու մշակութային գործոնները, ինչպես նշվեց, խորքային, հաճախ՝ բավականին դժվար բացահայտվող իրողություններ են: Ըստ այդմ, հետազոտությունում կիրառվել են հիմնականում **որակական մեթոդները**, որոնք ընձեռում են խորքային երևույթների ուսումնասիրության հնարավորություն:

Հետազոտությունում մեծ տեղ է հատկացվել գյուղատնտեսական քաղաքականության օրենսդրական ու նորմատիվային բազայի ուսումնասիրությանը, քանի որ հենց օրենսդրական ձևակերպումներն ու քաղաքականության սկզբունքներն են պայմանավորում քաղաքականության արդյունքները: Ուսումնասիրվել են վերջին տարիներին գյուղատնտեսությանը վերաբերող հիմնական փաստաթղթերը<sup>6</sup>

<sup>6</sup> Ցանկը ներկայացված է ուսումնասիրության վերջում:

- ✓ օրենքներ, հայեցակարգեր, ծրագրեր, կառավարության որոշումներ, հաշվետվություններ,
- ✓ վիճակագրական տարեգրքեր ու տեղեկատուներ,
- ✓ ՀՀ Նախագահի, վարչապետի, գյուղատնտեսության նախարարի ու ոլորտային պատասխանատուների մամլո ասուլիսներ, հրապարակային ելույթներ,
- ✓ խորհրդարանական խմբակցությունների ու առանձին պատգամավորների դիրքորոշումներ, մարզպետների տարեկան հաշվետվություններ,
- ✓ մամուլի հրապարակումներ և այլ փաստաթղթեր:

Քանի որ փաստաթղթերի ու նյութերի թիվը մեծ է, կիրառվել են սահմանափակումներ. քննության են ենթարկվել այն հիմնական փաստաթղթերը, որոնք կարգավորում են գյուղատնտեսական քաղաքականությունը: Հատկապես մինչև համաշխարհային ճգնաժամի սկիզբը հաստատված փաստաթղթերի ուսումնասիրության ժամանակ հաշվի է առնվել, որ դրանց որոշ ելքային ցուցանիշներ կամ կատարման ենթակա չեն, կամ վերանայվել են, հետևաբար՝ փոխվել են քաղաքականության շեշտադրումները: Խոսքը, մասնավորապես, <Կայուն զարգացման ծրագրի>՝ գյուղատնտեսության ցուցանիշների մասին է: Ֆինանսական ճգնաժամի պատճառով կայունացման ու զարգացման ծրագրերը փոխարինվել են նվազագույն, հիմնականում սոցիալական խնդիրներ լուծող ծրագրերով:

Հետազոտության հիմնական բաղադրիչներից մեկը որակական ուսումնասիրությունն է: Հետազոտության ընթացքում կիրառվել է երեք հիմնական գործիք՝ *ֆոկլու-խմբային հարցում, անհատական խորացված հարցազրույց ու փորձագիտական հարցում*: Այս գործիքներից յուրաքանչյուրը կիրառվել է կոնկրետ որակական տեղեկատվության ստացման նպատակով:

Հետազոտության հիմնական թիրախ խմբերը եղել են.

- ✓ ֆերմերներն ու անհատական գյուղացիական տնտեսություններ վարող անհատները,
- ✓ գյուղատնտեսական գործունեությունից տարբեր պատճառներով օտարված/ սահմանափակ գյուղատնտեսական գործունեություն ծավալող ընտանիքները,
- ✓ ընտանիքները, որոնց բյուջեն ձևավորվում է ոչ գյուղատնտեսական զբաղմունքներից, հատկապես արտագնացությունից,
- ✓ գյուղական միջավայրում առևտրական գործունեություն ծավալած ընտանիքները,
- ✓ այլ խմբեր ու անհատներ

Փորձագիտական հարցումներին մասնակցել են

- ✓ օրենսդիր և գործադիր իշխանությունների ներկայացուցիչները /սկզբնապես նախատեսված էր այս ոլորտի փորձագետների ավելի մեծ թիվ, սակայն

- հարցումները ցույց տվեցին, որ փորձագետները, ըստ էության, կրկնում են քաղաքականության հիմնական դրույթները, ուստի այս թիվը նվազեցվեց/
- ✓ ՏԻ մարմինների ներկայացուցիչներ՝ գյուղապետեր, գյուղապետարանի աշխատակիցներ, ոլորտի փորձառու մասնագետներ,
  - ✓ ոլորտի հիմնախնդիրներով զբաղվող այլ մասնագետներ:

Հետազոտությունը իրականացվել է հանրապետության երեք մարզում, որոնք գյուղատնտեսության զարգացման մակարդակի ու միտումների տեսանկյունից ներկայացուցչական են ողջ հանրապետության համար՝ Շիրակի, Արարատի և Վայոց ձորի մարզեր:

## **Գյուղատնտեսություն. իրավիճակ, զարգացման միտումներ, պետական քաղաքականություն**

### *Իրավիճակը և զարգացման միտումները*

այսաստանի Հանրապետության վերջին տարիների տնտեսական /այդ թվում՝  գյուղատնտեսական/ զարգացումները և կառավարության տնտեսական քաղաքականությունը արժանացել և արժանանում են հակասական գնահատականների:

1998-2008թթ., մինչև ֆինանսական ճգնաժամի սկիզբը, տնտեսությունը, ըստ պաշտոնական գնահատականների ու վիճակագրական տվյալների, աճում էր երկնիշ ցուցանիշներով, իսկ կանխատեսումները հիմնականում լավատեսական էին: Հանրային դաշտում, սակայն, կար նաև ոչ պաշտոնական, ընդդիմադիր գործիչների ու անկախ փորձագետների գնահատականների վրա կառուցված դիսկուրսը, որի հիմքում ընկած էր <տնտեսական բլեֆի> թեզը: Տնտեսական քաղաքականության հակառակորդների փաստարկները կառուցվում էին <շինարարական բլեֆի> և լեռնահանքային արդյունաբերության տեսակարար բարձր կշռի քննադատության վրա: Այսինքն, պետական-պաշտոնական ու ոչ պաշտոնական գնահատականները ոչ միայն էապես տարբերվում էին, այլ հիմնված էին նույն փաստերի ու իրողությունների տրամագծորեն հակառակ մեկնաբանությունների վրա: Քննադատվում էին նաև համակարգային բարեփոխումները, որոնց արդյունավետությունը ևս ցածր էր գնահատվում:

Հակասական ու ոչ միանշանակ էին նաև տնտեսական վիճակի մեկնաբանությունների և տնտեսական քաղաքականության հանրային ընկալումները, քանի որ անկախ հաջողություններից կամ դրանց իմիտացիայից, շարունակվում էին տնտեսության տարբեր ճյուղերի մոնոպոլիզացումը, տնտեսության ու

քաղաքականության սերտաճումը<sup>7</sup>, մանր ու միջին տնտեսավարողների դուրսմղումը շուկայից, տարածքային անհամաչափ զարգացման պահպանվածությունը, գյուղատնտեսության ոլորտի հիմնախնդիրները, ցածր կենսամակարդակի ու աղքատության բարձր տեսակարար կշռի պահպանումը<sup>8</sup>, համակարգային կոռուպցիան ու այլ հիմնախնդիրներ:

2008-2011թթ.<sup>9</sup> տնտեսական քաղաքականության <մեխը> շարունակում էին մնալ տնտեսական վերափոխումները, տնտեսության դիվերսիֆիկացիան՝ ճգնաժամի հաղթահարման նպատակով և լեռնահանքային արդյունաբերության զարգացումը<sup>10</sup>, որը լուրջ քննադատության է արժանանում փորձագետների և բնապահպանների կողմից: Ինչպես նախորդում, այս փուլում ևս գոյություն ունի տնտեսական քաղաքականության ընկալումների ու գնահատման առնվազն երեք դիսկուրս: Ըստ պետական դիսկուրսի, իշխանությունները արդյունավետ քաղաքականության արդյունքում կարողացան նվազագույնի հասցնել ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը, ապահովել տնտեսության դիվերսիֆիկացիան, տնտեսական գրավչության ու արդար մցակցության սկզբունքների աճը և այլն: Ընդդիմությունն այս փուլում անհամեմատ ավելի խիստ է, քանի որ ակնառու են նաև բացասական ազդեցությունները՝

---

<sup>7</sup>1997թ. ընտրությունների արդյունքում ձևավորված խորհրդարանը քաղաքականության ու տնտեսության սերտաճման լավագույն վկայությունն է: Ընտրությունների արդյունքում խորհրդարանում հայտնվեցին գրեթե բոլոր խոշոր օլիգարխները: Հանրապետության ամենահարուստ մարդկանցից մեկի՝ Գ. Ծառուկյանի <Բարգավաճ Հայաստան> կուսակցությունը դե-յուրե դարձավ երկրորդ քաղաքական ուժը: Ուշագրավ է, որ օլիգարխները խորհրդարանում հայտնվեցին ոչ միայն մեծամասնական ընտրատարածքներից, այլև կուսակցական ցուցակներով: Խորհրդարան օլիգարխներ <բերեցին> նաև փոքրաթիվ խմբակցություններ ունեցող <Հայ հեղափոխական դաշնակցությունն> ու <Օրինաց երկիր> կուսակցությունը: Չնայած վիճակի անընդհատ քննադատությանը նաև իշխանության կողմից, այսօր էլ <օլիգարխներով, թե առանց...> դիսկուրսը արդիական է: Իշխանավետ մամուլը, օրինակ, հանրային լայն հնչեղություն է հաղորդում այն փաստին, որ նախագահ Ս. Սարգսյանը դեմ է կուսակցական ցուցակները օլիգարխներով համալրելուն: Իրավիճակը, սակայն, ցույց է տալիս, որ անկախ ապագա խորհրդարանի կազմից, տնտեսական էլիտան դեռևս շարունակելու է կարևոր ազդեցություն պահպանել քաղաքական զարգացումների վրա:

<sup>8</sup> Հրապարակված վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ նույնիսկ ճգնաժամի պայմաններում դրամական փոխանցումները ամեն տարի գերազանցել են մեկ միլիարդ դոլարի սահմանը, գոյատևման կարևորագույն արդյուր հանդիսանալով տանսյակ հազարավոր ընտանիքների համար:

<sup>9</sup>Վերլուծությունում օգտագործվելու են 2011թ. վերաբերող տվյալները, այնքանով, որքանով դրանք ամփոփված են ու դրված շրջանառության մեջ:

<sup>10</sup> Վերջին տարիների գրեթե բոլոր բնապահպանական շարժումները կապված են հանքավայրերի շահագործման դեմ պայքարի հետ՝ Հրազդան, Սևանա լճի ավազան, Քաջարան, Թեղուտ և այլն: Ուշագրավ դրսևորումներ ունի նաև պայքարը իշխանության ներսում՝ գերշահութաբեր այս բիզնեսում մասնակցություն ունենալու համար: Պարբերաբար մամուլում հայտնվում է տեղեկատվություն այս կամ այն պաշտոնյայի կողմից հանքերի ապօրինի շահագործումների, ապօրինի լիցենզիաների տրամադրման մասին: <Հանքային> պատերազմների համատեքստում էր ներկայացվում նաև Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանի և գործարար Ս. Համբարձումյանի միջև հայտնի սկանդալը:

- ✓ *բնակչության շարունակվող, փորձագիտական գնահատումներով՝ ահագնացող արտագաղթ<sup>11</sup>,*
- ✓ *աղքատների և ծայրահեղ աղքատների տեսակարար կշռի աճ այն դեպքում, երբ ԱՀՌԾ իրագործման առաջին տարիներին հայտարարվեց ձեռքբերումների, հետևաբար՝ նաև ծրագրի տրամաբանության փոփոխության մասին<sup>12</sup>,*
- ✓ *բնակչության գնդունակության անկում, պարենային առաջին անհրաժեշտության ապրանքներին հատկացվող գումարների աճ,*
- ✓ *տարածքային անհամաչափ զարգացման պահպանում, որոշ դեպքերում՝ խորացում,*
- ✓ *և, ինչը պակաս վտանգավոր չէ, արտագաղթելու ցանկություն ունեցողների կամ պոտենցիալ միգրանտների տեսակարար կշռի աճ:*

Այս իրավիճակը, բնականաբար, պայմանավորում է նաև հանրային դիսկուրսը, որը վերջին տարիներին բնութագրվում է հիմնականում բացասական միտումներով:

Որպես վերջին տարիների տնտեսական զարգացումների վրա ազդող կարևոր գործոն հանդես է գալիս նաև ֆինանսական ճգնաժամը, որի ազդեցությունները առարկայական են և որը պատճառ դարձավ տնտեսության տարբեր ճյուղերի քաղաքականության վերանայումների:

Հիմնականում նշված գործոններն ու ընկալումներն են պայմանավորել նաև գյուղատնտեսության զարգացումը վերջին տասնամյակում: Էապես չեն տարբերվել նաև երեք դիսկուրսները՝ պետականը, ընդդիմադիր-փորձագիտականն ու հանրայինը: Դրանցից յուրաքանչյուրն ունեցել է գյուղատնտեսության դրական ու բացասական զարգացումների սեփական հիմնավորումները:

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը ծանր ազդեցություն ունեցավ գյուղատնտեսության վրա, կրճատելով վերջինիս առանց այն էլ սահմանափակ հնարավորությունները: Որպես գյուղատնտեսության վրա բացասաբար ազդող իրողություն պետք է դիտարկել <Հազարամյակի Մարտահրավերներ–Հայաստան> ծրագրի ավարտը՝ հիմնական բաղադրիչներից մեկի չկատարմամբ: Ֆինանսական ճգնաժամն ազդեց նաև <Կայուն զարգացման ծրագրի> հիմնական բաղադրիչների, այդ թվում՝ գյուղատնտեսության ոլորտի տարբեր միջոցառումների կատարման վրա:

Նյութերի, հրապարակումների ու հետազոտության վերլուծությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսության վիճակի, ինչպես նաև առաջիկա տարիների քաղաքականության վրա ազդելու են նաև քաղաքական գործոնները, հատկապես

<sup>11</sup>Ըստ պաշտոնական վիճակագրության, 2011թ. ՀՀ ժամանածների և հանրապետությունից մեկնածների թվի տարբերությունը շուրջ յոթանասուն հազար է, ինչը վերջին տարիների ամենաբարձր ցուցանիշն է:

<sup>12</sup> <Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը> <Կայուն զարգացման ծրագրի> վերափոխվեց հենց առաջանցիկ զարգացման և որոշ ցուցանիշների նախատեսվածից ավելի արագ հաղթահարման հիմնավորմամբ:

առաջիկա խորհրդարանական ու նախագահական ընտրությունները, քարոզչության, որոշ դեպքերում՝ նաև պոպուլիզմի տարրերի ակտիվացման պայմաններում:

Հետագոտությանը մասնակցած որոշ փորձագետներ հենց այս համատեքստում էին դիտարկում ագրարային ոլորտի վերջին երեք միջոցառումները՝ **պետության սուբսիդավորման արդյունքում գյուղական բնակչությանը էժան դիզվատելիքի**<sup>13</sup>, **պարարտանյութերի տրամադրում**<sup>14</sup> **և հարկային պարտավորությունների <ներում>**:

Վերջին <միջոցառումը> ՀՀ Կառավարության ընդունած որոշումն էր «Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին», «Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ, «Հողի հարկի մասին», «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքներում լրացումներ կատարելու մասին, որով առաջարկվում է հողի հարկ և գույքահարկ վճարող անձանց որոշակի ժամանակահատվածում և որոշակի չափով ազատել չվճարված գույքահարկից և հողի հարկից, հաշվարկված տույժերից և տուգանքներից<sup>15</sup>:

<sup>13</sup>ՀՀ կառավարության 2 փետրվարի 2012թ. 75-Ն որոշումը <ՀՀ հողօգտագործողներին մասշտիբ գներով դիզվելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու և ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու մասին>: Մանրամասն տես՝ <https://www.e-gov.am/gov-decrees/item/20858/> /վերջին այցելությունը 22.02.2012/

<sup>14</sup>ՀՀ կառավարության 2 փետրվարի 2012թ. 88-Ն որոշումը <ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու և ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 22-ի 1802-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին>: Ըստ այդ որոշման, գյուղական բնակավայրերին, մարզերի համար սահմանված քվոտաներով, հատկացվելու է 25000 տոննա պարարտանյութ: Տես՝ [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/kar/2012/02/12\\_0088.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2012/02/12_0088.pdf) /վերջին այցելությունը 22.02.2012/

<sup>15</sup> «Մա կարևորագույն օրենսդրական նախաձեռնություն է, որն առաջ է քաշել ՀՀ Ազգային ժողովի Հանրապետական խմբակցությունը, - նշել է վարչապետ Տիգրան Սարգսյանը: - Մեր մարզային այցելությունների ժամանակ գյուղացիներն այս հարցը մշտապես բարձրացնում են՝ ավելացնելով այն փաստարկը, որ ճգնաժամային տարիները նույնպես ստեղծել են լուրջ բարդություններ հարկային պարտավորությունների կատարման առումով: Պետությունն այսպիսի նախաձեռնությամբ հանդես գալով՝ շուրջ 43 մլրդ դրամի հարկեր է զիջում գյուղատնտեսության ոլորտում: Կարծում եմ՝ սա իր մեջ լուրջ ներուժ է պարունակելու նաև տնտեսական աճի խթանման առումով, որովհետև գյուղատնտեսության վրա հարկային բեռն էսպես նվազելու է»: [www.gov.am/am/news/item/9431/](http://www.gov.am/am/news/item/9431/): /վերջին այցելությունը՝ 26.02.2012/: Վարչապետի այս հայտարարություն-հիմնավորումը ուշագրավ է □□ քանի տեսանկյունից: Առաջին՝ նախաձեռնությունը առաջ է քաշվել ԱԺ Հանրապետական խմբակցության կողմից: Ամենևին չվիճարկելով ՀՀԿ նման իրավունքը, արձանագրենք, որ հայտարարությունը քաղաքական-քարոզչական ենթատեքստ ունի, եթե հաշվի առնենք նաև, որ ՀՀ Նախագահը գրեթե միաժամանակ հրամանագիր ստորագրեց Ազգային ժողովի ընտրությունների օրը նշանակելու մասին: Երկրորդ իրողությունը, որն առավել կարևոր է ու միաժամանակ վտանգավոր՝ տնտեսական ու սոցիալ-մշակութային է: Ընդամենը ամիսներ առաջ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանը հրապարակավ գրեթե անիրագործելի համարեց լրացուցիչ հարյուր միլիարդ դրամ պետբյուջե հավաքագրելու խնդիրը: Ըստ գնահատումների, ֆինանսական ճգնաժամը չի ավարտվել; վերջին մի քանի տարում ՀՀ պետական պարտքն ավելացել է շուրջ երկուսուկես միլիարդ դոլարով և ներկայումս կազմում է ավելի քան չորս միլիարդ դոլար: Այս պայմաններում անհասկանալի է <ներման տրամաբանությունը>: Կա սոցիալ-հոգեբանական մեկ գործոն ևս: □ազարավոր գյուղացիներ պարտաճանաչ հարկեր են մուծել: Պարտքերը ներելով, կառավարությունը չվճարելու նախադեպ է ստեղծում, բարդացնելով առանց այն էլ դժվարությամբ հավաքագրվող համայնքային բյուջեների կատարումը: Արդեն կան նաև առաջին բացասական արձագանքները: Տես՝ Հայաստանի համայնքների միության հայտարարության տեքստը՝ <http://hetq.am/arm/news/11192/karavarutyan-nakhagitsy-lrjoren-anhangstacrel-e-hamaynqneri-miutyany.html> /վերջին այցելությունը 29.02.2012/:

Այսպիսով, ինչպես տնտեսության ընդհանրապես, այնպես էլ գյուղատնտեսության զարգացումը ՀՀ-ում շարունակում է պայմանավորված մնալ օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի բավականին բարդ գործոնների համակցությունից:

### *Համառոտ պատմություն*

Հողերի խոշորացման և կոոպերացիայի խրախուսման քաղաքականության սոցիալ-մշակութային բաղադրիչների ամբողջական վերլուծության համար կարևոր է ՀՀ գյուղատնտեսության զարգացումների որոշ առանձնահատկությունները դիտարկելը: Հողային ֆոնդի կտրտվածությունը, լեռնային ռելիեֆը, գոտիական և տարածքային առանձնահատկությունները, պայմանավորելով գյուղատնտեսության զարգացումը, թելադրել են նաև պետական գյուղատնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքները:

Խորհրդային իշխանությունը, ոչ միայն տնտեսական, այլ քաղաքական ու գաղափարական հիմնավորումներով, որդեգրեց հողօգտագործման ձևերի և գյուղատնտեսության կազմակերպման սոցիալ-մշակութային հիմքերի արմատական փոփոխությունների քաղաքականություն: ***Հողի համաժողովրդական սեփականություն***՝ սա էր այն բանաձևը, որի պայմաններում զարգանում էր գյուղատնտեսությունը՝ իր առավելություններով ու թերություններով:<sup>16</sup>

Խորհրդային ագրարային քաղաքականությունը ուներ երկակի ազդեցություն: Ակնհայտ է, որ Հայաստանի գյուղատնտեսությունը յոթ տասնամյակի ընթացքում հասավ բավականին լուրջ հաջողությունների:

Մյուս կողմից, սկսած 1970-ական թթ., արձանագրվել են գյուղական բնակչության սոցիալ-մշակութային ու ժողովրդագրական բնութագրիչների վտանգավոր միտումներ: Ակտիվ ուրբանիզացիայի պայմաններում գյուղական բնակչության տեսակարար կշիռը նվազում էր, 1970-ական թթ. կայունանալով 34-36%-ի սահմաններում: Տագնապահարույց էին նաև սոցիալ-մշակութային զարգացման միտումները.

- ✓ վերանում, խոշորացման ու այլ իրողությունների արդյունքում դադարում էին գոյություն ունենալ հարյուրավոր գյուղեր բոլոր շրջաններում,

---

<sup>16</sup>Գյուղացիական բազմաթիվ տնտեսությունների համար ընդունելի չէին <հավասարարական> սկզբունքները, առավել ևս՝ դրանց բռնի պարտադրումը: Պատահական չէ, որ հանրային սեփականության ինստիտուտի հիմնական <մրցակիցը> օժանդակ տնտեսություններն էին, որոնք ապահովում էին գյուղատնտեսության առանձին ճյուղերի արտադրանքի բավականին բարձր մասը: Սա այն <սոցիալ-մշակութային> միկրոմիջավայրն էր, որը հակադրվում էր խորհրդային կոլեկտիվիզմին: Օժանդակ տնտեսությունը ոչ միայն գործունեության կազմակերպման միջավայր էր, այլև ավանդական հմտությունների, հողամշակության եղանակների, ավանդույթների պահպանման ու փոխանցման հնարավորություն: Միջին ձևակերպմամբ՝ օժանդակ տնտեսությունն ապահովում էր տնտեսության բազմաֆունկցիոնալությունը՝ խորհրդային ագրարային քաղաքականության պայմաններում:



- ✓ թուլանում էր գյուղական բնակչության ներուժը, սահմանափակվում էին արդյունավետ գյուղատնտեսություն վարելու հնարավորությունները՝ որպես արդյունք գյուղական բնակչության սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշների փոփոխությունների:
- ✓ ԽՍՀՄ վերջին տարիներին գյուղերում բարձր էր կենսաթոշակառուների կշիռը, իսկ գյուղաբնակ երիտասարդության հիմնական հատվածը, գյուղում բնակվելով, նախընտրում էր ոչ գյուղատնտեսական զբաղմունքները<sup>17</sup>:

### *Հողային վերափոխումներ*

Գյուղատնտեսության համար կարևորագույն նշանակություն ունեցավ 1991թ. սկսված հողի, անասնազլխաքանակի, տեխնիկայի ու գյուղատնտեսական նշանակության կառույցների զանգվածային սեփականաշնորհման գործընթացը, որը բոլոր բնակավայրերում ու գյուղատնտեսության բոլոր ճյուղերում իրագործվեց գրեթե միաժամանակ<sup>18</sup>: Չնայած սեփականաշնորհմանը, գյուղատնտեսությունը չկարողացավ դուրս գալ այն ճգնաժամից, որի հաղթահարման նպատակ ունեին վերափոխումները: Համադրենք գյուղատնտեսության նախարարության հաշվետվություններում ներկայացված վերջին երկու տարիների որոշ ցուցանիշներ, որոնք, ըստ էության, բնութագրական են գյուղատնտեսության զարգացման համար ընդհանրապես<sup>19</sup>: Ըստ գյուղնախարարության տվյալների, նաև ֆինանսական

<sup>17</sup>Գյուղը <փրկելու համար> խորհրդային իշխանությունները ստիպված էին գնալ տնտեսական անարդյունավետ միջոցառումների՝ արտադրական ձեռնարկությունների ու մասնաճյուղերի հիմնում, որպեսզի ապահովեին ոչ գյուղատնտեսական զբաղմունքները: Սա երիտասարդությանը գյուղում պահելու տարբերակներից մեկն էր: Այսօր ևս քաղաքականության փաստաթղթերում խոսվում է ոչ գյուղատնտեսական զբաղմունքների աճի մասին: Փորձը, սակայն, ցույց է տալիս, որ դրա համար պահանջվում են լուրջ միջոցներ, որոնք պետությունը չունի, իսկ մասնավոր սեկտորը, հաշվի առնելով ոլորտի ռիսկայնությունը, ցանկություն չունի <տարածապես> ընդլայնվելու:

<sup>18</sup> Այս մասին մանրամասն տես՝ Մ. Գաբրիելյան, Հասարակական և մշակութային փոփոխությունները ՀՀ արդի գյուղում /թեկնածուական ատենախոսության սեղմագիր/, Եր., 2001; *Նույնի՝* Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, Եր., 2001:

<sup>19</sup>ՀՀ ԱՎԾ տվյալներով 2010թ. հունվար-նոյեմբեր ամիսներին գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը կազմել է 596.7 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի 85.5 %-ն է: Բուսաբուծության համախառն արտադրանքի ծավալը կազմել է 385.8 մլրդ դրամ (նախորդ տարվա ցուցանիշի 79.5%-ը), իսկ անասնապահությանը՝ 210.9 մլրդ դրամ (նախորդ տարվա՝ 99.0%-ը): Այսինքն գյուղատնտեսությունում 2010թ. առաջին 11 ամիսների տվյալներով (հունվար-նոյեմբերին) գրանցվել է տնտեսական անկում, որը կազմում է 14.5 %, այդ թվում բուսաբուծությունում՝ 20.5%, իսկ անասնապահությունում՝ 1.0%: Բուսաբուծությունում համախառն արտադրանքի ծավալի կրճատումը պայմանավորված է գրեթե բոլոր հիմնական մշակաբույսերի, բացի խաղողից, արտադրության ծավալների կրճատմամբ: Անասնապահությունում համախառն արտադրանքի ծավալի որոշակի կրճատումը պայմանավորված է մսի (4.2%) և կաթի արտադրության (3.6%) ծավալների նվազմամբ: 2010թ. գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 283.2 հազ. հա՝ նախորդ տարվա 300.0 հազ. հա-ի դիմաց: Հատկապես պակասել են *բոստանային մշակաբույսերի՝ 29.0%, կարտոֆիլի՝ 11.6%, հացահատիկի՝ 7.1% ցանքատարածությունները: Լուրջ հիմնախնդիր է վարելահողերի օգտագործման ցածր մակարդակը: Այս ցուցանիշը 2010թ. ևս նվազման միտում է դրսևորել և կազմել շուրջ 63%: Այսինքն, ՀՀ կառավարության կողմից հաստատված հողային*

ճգնաժամով պայմանավորված, 2010թ. գյուղատնտեսության գրեթե բոլոր ոլորտներում արձանագրվել է անկում նախորդ տարիների համեմատությամբ:

Ներկայացված թվերի ու վերլուծությունների մեջ, սակայն, կան այնպիսիները, որոնք արտացոլում են ոչ միայն կոնկրետ վիճակը, այլ խորքային գործընթացներ և կապված են գյուղացիության, գյուղական բնակչության միջավայրում առկա սոցիալ-մշակութային խորքային ճգնաժամի հետ:

Դրանցից ուշագրավ են հատկապես երկուսը՝

- ✓ **մշակաբույսերի ցանքատարածությունների կրճատումը,**
- ✓ **չմշակվող վարելահողերի բարձր տեսակարար կշիռը՝ շուրջ մեկ/երրորդ:**

ՀՀ գյուղատնտեսության հիմնական բնութագրիչները ապրանքայնության ցածր մակարդակը, էքստենսիվությունը, հողատարածքների մեծ թիվն ու կտրտվածությունը, գյուղացիական տնտեսությունների մեծ թիվն են<sup>20</sup>: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, գյուղատնտեսության վիճակի հաշվառմամբ, դրական լիցքեր կարող էր հաղորդել գյուղատնտեսությանը, եթե իրականացվեին կոնկրետ, նպատակային միջոցառումներ: Ըգնաժամի հետևանքներից մեկը շուկաների անկայունությունը, ներմուծման ու արտահանման համամասնությունների փոփոխություններն էին: Փոփոխություններ արձանագրվեցին նաև պարենային շուկայում: Այս պայմաններում տեղական արտադրողները կարող էին ստանալ մեկնարկային առավելություններ, եթե կտրուկ ակտիվացվեր տնտեսություններին մատչելի վարկերով ապահովելու քաղաքականությունը: Այդպիսի հնարավորություն ՀՀ բանկային համակարգն ուներ, քանի որ համակարգի ներկայացուցիչների գնահատմամբ, կար ազատ դրամական

---

*հաշվեկշռով 449,4 հազ. հա վարելահողերից ավելի քան 166,2 հազ. հա չի ցանվել: Դրանից մոտ 109 հազ. հա օգտագործվել է որպես խոտհարք, մնացած վարելահողերը չեն օգտագործվում՝ հողակտորների կտրվածության և համայնքներից մեծ հեռավորության, սահմանամերձ և ակնհայտված գոտում գտնվելու, տնտեսությունների միջոցների սղության և այլ պատճառներով: Տես՝ ՀՀ կառավարության 2010թ. գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման մասին ՀՀ գյուղատնտեսության նախարարության հաշվետվությունը, էջ 1-2: [www.minagro.am](http://www.minagro.am)*

<sup>20</sup>Նախկին 869 կոլեկտիվ և պետական տնտեսությունները ծավալված էին 147000 առանձին հողհանդակների վրա: Պետք էր դրանք պահպանել՝ արցության կարգով տրամադրելով առանձին լոթերով՝ տարբերություն դնելով գյուղի աշխատավորի և գյուղաբնակի միջև, այլ ոչ թե բաժանել մոտ միլիոն կտորների (այսօր գոյություն ունեցող գյուղացիական 336000 տնտեսություններից յուրաքանչյուրին հող է հատկացվել մի քանի տեղ): Միայն գործողություններ կատարել, հիմնավորելով, որ այլ կերպ «դժգոհություն կառաջանար», սովյալ դեպքում միանգամայն անհիմն է, քանի որ մեր առաջադրած տարբերակում էթե դժգոհություն առաջանար էլ, դժվար թե գերազանցեր այսօրվա օրեցօր աճող անբավարարվածության զգացումը: Փոխարենը խնդիրն արդեն ճիշտ լուծում ստացած կլիներ: Հանրապետությունում գյուղացիական տնտեսության միջին չափը հավասար է 1.37 հա և տատանվում է 0.61 հա Արարատյան հարթավայրում և 3.0 հա նախալեռնային ու լեռնային շրջանների համար: Միջին հաշվով 3 կտոր կազմող տնտեսության հողատարածքի մեկ կտորը ոռոգելի է, երկուսը՝ ոչ: Տնտեսությունների 88%-ը ավելի փոքր է, քան 2 հա-ն և զբաղեցնում է վարելահողերի 77%-ը: 12%-ը ավելի մեծ է, քան 2 հա-ն և զբաղեցնում է վարելահողերի 23%-ը: Տնտեսությունների մոտ 15%-ում մշակում են նաև վարձակալած հողեր, միջինը 3.2 հեկտարի չափով, իսկ 30%-ում չեն մշակում մասամբ կամ ամբողջապես: Վ. Հայկազյան, Հայաստանի գյուղատնտեսության խնդիրները և զարգացման հեռանկարները:

միջոցների լուրջ զանգված: Այսինքն, պետական նպատակային քաղաքականությունը, տնտեսությունների վարկավորման ակտիվացումը ստեղծված իրավիճակում կարող էին հանգեցնել շուկայում անհատական գյուղացիական տնտեսությունների դիրքերի ամրապնդմանը, գյուղատնտեսության վիճակը դարձնելով մեկնարկային առավելություն, քանի որ **ա.** փոքր տնտեսությունների թեկուզ մասնակի ապրանքայնացման համար պահանջվում են համեմատաբար քիչ ներդրումներ, այդ թվում՝ վարկային, **բ.** գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության թեկուզ մասնակի աճը, իրացման, մթերումների և գնումների քաղաքականության ճիշտ կառուցման դեպքում, կդառնար այն հիմքը, որը, ի վերջո կարող էր հանգեցնել վերջնական կայացմանը<sup>21</sup> և **գ.** քաղաքականությունը հնարավորություն կտար կայացնել արտադրող-մթերող/վերամշակող օղակը: Այս հնարավորությունը, սակայն, կամ չօգտագործվեց կամ օգտագործվեց ոչ բավարար արդյունավետությամբ:

Երկրորդ ցուցանիշը, որը խորքային և համակարգային ճգնաժամի վկայությունն է, վերաբերում է վարելահողերի չօգտագործմանը: Լուրջ վերլուծություններ հարկավոր չեն հասկանալու համար, որ իրավիճակը վտանգավոր է ռազմավարական ու պետական անվտանգության տեսանկյունից, հատկապես որ ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունում պարենային անվտանգության ապահովումը և պարենապահովվածության բարձրացումը համարվում է գերակայություն<sup>22</sup>: ՀՀ-ն այսօր հացահատիկ ներկրող երկիր է և այս պայմաններում չի մշակվում շուրջ 170 հազար հա վարելահող: Մեկ հեկտարից նույնիսկ քսան-քսանհինգ ցենտներ բերքատվության հաշվարկի դեպքում հանրապետությունը կորցնում է շուրջ 340-400 հազար տոննա հացահատիկ: Այսինքն, ակնհայտ են քաղաքականության հիմնախնդիրները:

Ցուցանիշը, ինչպես և հետազոտության ընթացքում արձանագրված՝ հողերը մշակելու ցանկության բացակայությունը, փորձագետների կարծիքով կապվում են նաև տնտեսության ճյուղերի մենաշնորհայնացման հետ: Իսկ նման իրավիճակը խոչընդոտում է գյուղատնտեսության զարգացման հնարավորությունները նույնիսկ եթե մենաշնորհները գյուղատնտեսությունում չեն:

Այսինքն, գյուղատնտեսության հիմնախնդիրները պետք է դիտարկվեն **համակարգային ճգնաժամի համատեքստում, իսկ դրանց հաղթահարումը կապվի համակարգային ճգնաժամի հաղթահարման հետ:**

---

<sup>21</sup>Նման քաղաքականություն որդեգրել էր ՀՄՀ գրասենյակը, որի մրցունակ գյուղատնտեսական վարկերը նպատակային էին և հատկացվում էին կոնկրետ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար: Արդյունքում, հատկապես Արարատյան դաշտում բազմաթիվ տնտեսություններ օգտվեցին վարկերից, զարգացրին ջերմոցային տնտեսությունները:

<sup>22</sup> ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգում նախատեսված է ինքնաբավության ցուցանիշների աճ գյուղատնտեսական մթերքների արտադրության բոլոր ոլորտների գծով:

## **Գյուղական բնակչության սոցիալ-մշակութային բնութագիրը հողերի խոշորացման և կոոպերացիայի զարգացման համատեքստում**

Գյուղատնտեսական գործունեության կազմակերպումը բարդ ու փոխկապակցված իրողությունների ամբողջություն է: Տնտեսական գործունեքը համախմբի ընդամենը մեկ բաղադրիչն են: Սոցիալ-մշակութային և հոգեբանական գործունեքը ոչ պակաս կարևոր են գործունեության կազմակերպման, տնտեսավարման արդյունավետ մեթոդների ներդրման ու վերարտադրության տեսանկյունից:

Հետազոտությունը հնարավորություն տվեց սոցիալ-մշակութային ու հոգեբանական գործունեքը, որոնք կարևոր են հողերի խոշորացման ու կոոպերացիայի զարգացման համատեքստում, խմբավորել երեք հարթությունում:

### **Ա. Պետություն, պետական մասնակցություն, պետական աջակցություն:**

Անկախության տարիներին, ըստ գրառված նյութերի, գյուղական բնակչության մի մասի, հատկապես միջին և ավագ սերնդի ներկայացուցիչների մոտ, շարունակվում է վերարտադրվել պետության՝ որպես <հոր>, <պաշտպանի> կայուն ընկալումը և պետական աջակցության հետ է կապվում հիմնախնդիրների լուծումը: Գյուղական բնակչության հիմնական մասի կարծիքով, այդ միջամտությունն ու աջակցությունն այսօր բավարար չեն:

### **Բ. Սոցիալական մշակույթ՝ գյուղատնտեսական գործունեության կազմակերպման ասպարեզում**

Գյուղատնտեսության արդյունավետ կազմակերպումը ենթադրում է անհատի ակտիվ, ստեղծագործական մասնակցություն տարբեր գործընթացներին: Զարգացած գյուղատնտեսություն ունեցող երկրներում այս նպատակին հասնելու համար կարևոր է պետության գործունե, ակտիվ միջամտությունը, որը նաև պաշտպանվածության, գործունեության ռազմավարական պլանավորման, ռիսկերի նվազեցման երաշխիք է ֆերմերային տնտեսությունների ու գյուղատնտեսությամբ զբաղվող սուբյեկտների համար: Այս քաղաքականությունն ունի սոցիոմշակութային կարևորություն, քանի որ ապահովում է միջավայրին կապվածությունն ու ընդլայնված վերարտադրության հնարավորությունները:

ՀՀ-ում այսօր գյուղատնտեսական գործունեությունը մեծի մասամբ ընկալվում է որպես նույնիսկ **գոյության նվազագույն միջոցների ապահովման հնարավորություն չտվող համակարգ:**

Ենթակառուցվածքների, գյուղի՝ որպես բնակության վայրի ոչ բավարար գրավչության պայմաններում սա նշանակում է նաև, որ

✓ *գյուղական բնակչության մի մասը, հատկապես երիտասարդությունը, գյուղում ապագա ու հեռանկար չի տեսնում, իսկ ապագայի կառուցման հնարավորությունները կապվում են Երևանի, կամ, ինչն առավել վտանգավոր է, այլ պետությունների, հիմնականում Ռուսաստանի Դաշնության հետ:*

Այս իրավիճակում անձնային, ընտանեկան ու համայնքային հարթություններում նվազագույնի են հասել փոփոխությունների ձգտումները:

✓ *Սրա արդյունքը գյուղական բնակչության արտահոսքն է: Վտանգավոր է այն, որ աշխատանքային միգրացիան՝ որպես բարձր կենսամակարդակի ապահովման հիմնական տարբերակ, աստիճանաբար դրսևորում է անվերադարձ միգրացիայի վերածվելու միտումներ:*

Անհատական խորացված հարցազրույցների ընթացքում որպես դրսի հիմնական առավելություն, նշվում էր, որ ընտանիքով դրսում ավելի հեշտ է ոտքի կանգնելը<sup>23</sup>:

Արձանագրված հաջորդ տազնապահարույց իրողությունն այն է, որ *նույնիսկ դրսում գումար վաստակող գյուղացիները որպես կանոն, խուսափում են գումարները գյուղատնտեսության մեջ ներդնելուց, դա համարելով վտանգավոր ու ռիսկային: Այսինքն, գումարի առկայության պայմաններում նույնիսկ գյուղատնտեսության ոլորտ ներդրումները հեռանկարային չեն համարվում ոչ մարտավարական, ոչ էլ, առավել ևս՝ ռազմավարական տեսանկյուններից:* Այս իրողությունը բնորոշ է հատկապես արտագնացության կայուն ավանդույթներ ունեցող մարզերի: Փաստերը խոսում են՝ մարդատար մեքենաների թվի աճ և գյուղատնտեսական տեխնիկայի սակավության մասին անընդհատ խոսակցություններ<sup>24</sup>:

Անհատական հարթությունում առկա հաջորդ կարևոր խնդիրն արդեն վերաբերում է գյուղատնտեսական գործունեության կազմակերպմանն ընդհանրապես: Շիրակի, Վայոց Ձորի մարզի ուսումնասիրված որոշ համայնքներում արտագնա աշխատանքի մեկնողների տեսակարար կշիռը բարձր է: Սրան գումարվում է ճոճանակային կամ ներհանրապետական միգրացիան: Երիտասարդության և ընդհանրապես աշխատուժի բացակայությունը, հատկապես գյուղատնտեսական աշխատանքների շրջանում, սահմանափակում է գյուղատնտեսության վարման հնարավորությունները: Սա իր հերթին հանգեցնում է նրան, որ ընկնում է

<sup>23</sup>Դրսում հաստատվելուց հետո ընտանիքի անդամներին, հարազատներին ու ընկերներին հրավիրելու օրինակները հազարավոր են: Արտագնացության բարձր կշիռ ունեցող ցանկացած գյուղում կարելի է գտնել դեպքեր, երբ մի քանի տարում բազմաթիվ ընտանիքներ հաստատվել են համագյուղացի գործարարի, ազգականի մոտ, ժամանակի ընթացքում տեղափոխել նաև ընտանիքները: Մի քանի տարի առաջ Տավուշի մարզի խոշոր համայնքներից մեկի՝ Այգեձորի բնակիչները հաշվել էին, որ անկախությունից հետո իրենց համագյուղացիները միայն Մոսկվայում գնել են շուրջ 400 բնակարան:

<sup>24</sup>Կան համայնքներ, որոնք այս տեսանկյունից բացառություն են: Ազատան, Արևիկ ու այլ համայնքներում այսօր մեծ տարածում ունի կարտոֆիլի մշակությունը և բազմաթիվ ընտանիքներ կարողանում են լուրջ գումարներ վաստակել:

գյուղատնտեսության ապրանքայնությունը, այն ավելի է մոտենում կիսանատուրալ /կիսափակ բնատնտեսական/ տնտեսությանը:

**Գ. Համայնքային հարթություն.** այս հարթությունում ևս առկա են բազմաթիվ խնդիրներ: Տեղական ինքնակառավարման համակարգը կայանում է լուրջ բարդություններով, հիմքում ունենալով և օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: ՏԻ մարմինները բազմաթիվ գյուղական համայնքներում չունեն իրավիճակային ու հեռանկարային պլանավորման հնարավորություն, բավարարվելով ընդամենը սահմանափակ, հիմնականում պետական դոտացիաների հաշվին գոյացող բյուջեների կառավարմամբ: Գյուղական համայնքների մեծ մասում բացակայում են այլընտրանքային ինստիտուցիոնալ կառույցները. կոոպերատիվներ, ֆերմերային տնտեսություններ: Մա նշանակում է համայնքային հարաբերությունների ու դրանց կառավարման մեխանիզմների հիմնականում մեխանիկական սկզբունքների գերակայություն, ընդ որում հարաբերությունների բոլոր հարթություններում՝ ՏԻ մարմնի ղեկավարի ընտրությունից մինչև հարկերի գանձում ու այլ խնդիրներ: Երիտասարդության տևական բացակայությունը կամ արտահոսքը իր հերթին ավելի է խորացնում ստեղծված բավականին ծանր իրավիճակը:

Սոցիալ-մշակութային իրավիճակի այս բնութագիրը ցույց է տալիս, որ առկա են բավականին լուրջ խնդիրներ հողերի խոշորացման և կոոպերացիայի ճանապարհին: Մի կողմից, գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչները ընդունում են գյուղատնտեսական գործունեության ցածր արդյունավետությունն ու համարում, որ խոշորացումը կարևոր է բարդությունների հաղթահարման ճանապարհին:

*Կոոպերացիայի գաղափարը միանշանակ դրական է, բայց ավելի շատ պտի լինեն ու ավելի շատ հողերի վրա մշակեն: Էսօր էդ չորսուկես հեկտարն էլ լուրջ թիվ չի: Ես օրինակ էդ ուղղությամբ աշխատանքներ տանում եմ, ասում եմ բերենք միանանք: Հլը արդյունք չկա, բայց կարծում եմ, վերջում դրան կգան, որ դա ձեռ է տալիս: Լինում ա միասնական ֆերմեր: Կոոպերացիային պտի գյուղում հասնես, որ արդյունք ունենաս: Էսօր հասարակ օրինակ. շուկայում պոմիդորը իջնում է մինչև երեսուն դրամ, բայց գյուղացին ինքնարժեքի հաշվարկ չունի, չգիտի մի կիլոն իրա վրա ինչքան է նստում: Մի հեկտարը մեր վրա նստում է մոտավորապես մեկ միլիոն կամ մի քիչ ավել գումար, եթե հաշվում եմ նաև մեր աշխատանքը: Թե չէ եթե դա չհաշվեմ, կարամ գնամ ուրիշ մոտ աշխատեմ, փողն առնեմ:*

*Փորձագիտական հարցում, Արմավիրի մարզ*

Մյուս կողմից, որպես փաստարկ բերվում է այն, որ գյուղացիական տնտեսությունները պատրաստ չեն գնալ հողերի խոշորացման, քանի որ կառաջանան բարդություններ հատկապես հողամշակութային հետ կապված:

*Եթե հողերի խոշորացում լինի, գյուղացին ասում ա կրեդիտներից պրծնեմ, նորմալ մարդիկ գան, էս հողերը վերցնեն, մենք էլ գնանք իրանց ձեռի տակ աշխատենք: □ ամ ԶՕ-ի փող կտան, համ տրակտորի: Օրինակ էս հող ունեմ, բայց ոչ փող չկա ու էդ հողը փչանում ա: Կամ մշակում են ու տեխնիկա չունեն: Իսկ մենք ֆերմեր ունենք, չորս հատ կիրովեց ունի, մենք մի հա-ից ստանում ենք հինգ ցենտեր, ինքը տաս... Եթե հողերը չկոմպլեկտավորվի, էս ժողովուրդը լրիվ վարի կեթան, բացի էդ փոքր տարածքներում մշակությունը լավ չի կատարվում: Ժողովուրդը ուղղակի սխալ են մտածում, մտածում են մեր հողը տալիս ենք ուրիշ մարդուն, բայց պիտի հասկանան, որ հողը իրանն ա մնում, ինքն էլ*

*դառնում ա կոլեկտիվի անդամ: Վարկերից հիմա գյուղերը կատաստրոֆիկ վիճակի մեջ են, ճռուում են վարկերից, գյուղացին կամավոր չի գնա, բայց կամաց-կամաց կհասկանա:*

*Փորձագիտական հարցում, Գեղարքունիքի մարզ*

*Հողերի խոշորացում ցանկալի կլինի, կամավոր լինի, բայց մարդիկ կան, որ չեն վերցնի, քանի որ բյուրոկրատական, ֆինանսական խնդիրների առաջ ենք կանգնելու: Մեր գյուղում որևէ նման նախաձեռնություն չի եղել, մի անգամ մի կազմակերպություն կար, ուզում էին նման բաներ անել, մարդիկ կամավոր չեն գնում դրան, քանի որ փող չունեն...Բայց դե դա ավելի էֆեկտիվ կլինի, մեր սակավահող պայմաններում: Էն ժամանակ մարդիկ դեռ հավատ ունեին, բայց լավ ուղեղները գնացին, մնացել են հիմնականում անճարները:*

*Փորձագիտական հարցում, Գեղարքունիքի մարզ*

*Կոոպերացիան լինի լեռնային գոտիներում, կոնկերտ Ազատանում կոոպերացիան չի գործի, քանի որ ժողովուրդը կապվել է հողի հետ ու իր հողը մշակում է: Հիմնականում վերևից են խանգարում: Հիմա ես կարտոշկա եմ մշակում, բայց Պարսկաստանից ու Թուրքիայից կարտոշկա ա գալիս: Թե չէ Շիրակում եթե հնարավորություն տան մարդկանց, դրսից չբերեն, կտրուկ կշատանան: Մենք էսօր իրացման խնդիր ունենք. կառավարությունը չի օգնում ոչ պարարտանյութով, ոչ թունաքիմիկատներով, բայց հենց գալիս ա վաճառելու ժամանակ, գյուղացու օդը փակում են:*

*Անհատական խորացված հարցազրույց, Շիրակի մարզ*

Բերված օրինակների հիմքում հիմնականում սոցիալական ու մշակութային գործոններն են, որոնք հերթական անգամ ապացուցում են, որ հողերի խոշորացման ու կոոպերացիայի խթանման քաղաքականությունում պարտադիր պետք է հաշվի առնվեն հենց սոցիալ-մշակութային գործոններն ու տեղական առանձնահատկությունները: Շիրակի մարզի օրինակով կարելի է տեսնել, որ տարբեր են կոոպերացիայի ու հողերի խոշորացման հնարավորությունները նույնիսկ մեկ մարզի ներսում:

## **Տարածքային ու գոտիական առանձնահատկություններ՝ աջակից, թե խոչընդոտ**

*Վերջին երկու տասնամյակում գյուղատնտեսության պլանավորման ու գյուղատնտեսական գործունեության կազմակերպման սկզբունքները տեղափոխվել են հիմնականում անհատական, ընտանեկան, լավագույն դեպքում՝ համայնքային հարթություն, համապատասխանեցվելով ոչ թե գյուղատնտեսության զարգացման ընդհանուր, համապետական միտումներին, այլ ընտանեկան պահանջմունքներին ու հնարավորություններին:*

*Ծանր իրավիճակի հաջորդ ցուցիչը չմշակվող երեսուն տոկոս վարելահողերն են այն դեպքում, երբ Հայաստանը համարվում է սակավահող հանրապետություն:*

Առանձնահատկությունները, նաև՝ գյուղատնտեսության զարգացման միտումները բնութագրող հաջորդ ցուցիչը *անհամաչափ տարածքային զարգացումն է:*

Առանձին մարզեր՝ Արարատ, Արմավիր, Արագածոտնի ու Կոտայքի մարզերի որոշ համայնքներ ունեն մեկնարկային առավելություններ, քանի որ գտնվում են Երևանին և մթերման ու վերամշակման ձեռնարկություններին մոտ:

Ձեռնարկությունների ու իրացման շուկաների նման բաշխվածությունն, իր հերթին ենթադրում է փոխադրումների մեծ ծախսեր, շուկայի սահմանափակ մասշտաբային Երևանից հեռու գյուղերի համար: Բացառությունը հիմնականում կաթի վերամշակման ոլորտն է: Կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող խոշոր ձեռնարկությունները՝ <Աշտարակ կաթ>, <Մարիաննա> և ուրիշներ, ձևավորել են մթերման ու գնումների ցանց, լուծելով իրացման և կանխիկ գումարի խնդիրը, ինչը կարևոր է հատկապես գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում<sup>25</sup>:

Չնայած առկա տեղաշարժերին, խնդիրների մի մասը շարունակում է մնալ չլուծված: Եվ փորձագիտական և անհատական խորացված հարցազրույցների ընթացքում որպես գյուղացիական տնտեսությունների համար վտանգավոր միտում արձանագրվում է <խոշոր խաղացողների> հնարավոր մուտքը գյուղատնտեսություն<sup>26</sup>: Հիմնական վտանգն այն է, որ ներկրման ու մանրամեծածախ առևտրի մոնոպոլիզացման պայմաններում խոշոր խաղացողներն առաջիկա տարիներին մոնոպոլիզացնելու են նաև գյուղմթերքների արտադրությունը, ոլորտից դուրս մղելով գյուղացուն կամ սահմանափակելով գյուղացու հնարավորությունները: Որ խոշորացման ու մոնոպոլիզացիայի հետևանքներն հիմնականում այսպիսին են, ցույց է տալիս նաև միջազգային փորձը: Սակայն զարգացած պետություններում լուծված է այլընտրանքային զբաղվածության խնդիրը: ՀՀ-ում **գյուղմթերքների արտադրության մոնոպոլիզացիան նշանակում է աշխատուժի ավելցուկի դուրսմղում հիմնականում դեպի ՌԴ կամ ԱՊՀ այլ երկրներ, կամ՝ լավագույն դեպքում վերածում վարձու աշխատուժի:**

Նույնիսկ նախնական վերլուծությունները ցույց են տալիս, որ հանրապետությունը ի գործու չէ <կլանել> խոշորացման արդյունքում ձևավորված աշխատուժի ամբողջ ավելցուկը: Փաստաթղթերում հիմնական այլընտրանքային լուծում է համարվում կամավորության հիմունքներով գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումն ու զարգացումը, **ինչպես նաև ոչ գյուղատնտեսական**

<sup>25</sup> Հաջորդ դրական իրողությունը կապվում է տեղերում կաթի վերամշակմամբ ու կաթնամթերքների արտադրությամբ զբաղվող ընկերությունների թվի աճի հետ: Շիրակի մարզում, օրինակ, որոշակի դերակատարություն ունի շուկայում կայուն դիրքեր զբաղեցնող <Իգիթ> ընկերությունը: Ամասիայի ու Աշոցքի տարածաշրջանում խնդիրների թեկուզ մասնակի լուծմանը նպաստում է նորաստեղծ <Բանդիվան-կաթ> ընկերությունը:

<sup>26</sup> Խոսքը կարտոֆիլի մշակությամբ զբաղվող անհատների կամ խմբերի մասին է Շիրակի ու Գեղարքունիքի մարզերում, այգեգործությամբ զբաղվողների՝ Արարատի, Վայոց ձորի, Արմավիրի ու Արագածոտնի մարզերում:



**գրադվածության աճը:** Ուսումնասիրությամբ, սակայն, արձանագրվեց թեական վերաբերմունք կոռպերացիայի զարգացման ու հողերի խոշորացման հանդեպ: Միաժամանակ, գրեթե անիրագործելի է համարվում նաև ոչ գյուղատնտեսական գրադվածության ապահովումը հատկապես սահմանամերձ, հեռավոր ու լեռնային գյուղերում, որոնք համարվում են ռիսկային ներդրումների տեսանկյունից: Հիմնական փաստարկն այս ոլորտում այն է, որ եթե նշված գոտիները իրապես գրավիչ լինեին, բիզնեսն արդեն այնտեղ հայտնված կլիներ:

Այսինքն, հիմնական փաստարկները սոցիալական և մշակութային են և վերաբերում են հիմնականում առկա հիմնախնդիրներին, հատկապես գյուղական բնակչության անպատրաստ լինելուն և ցանկության բացակայությանը:

Հետազոտական կանխավարկածը, ըստ որի հողերի խոշորացման և կոռպերացիայի զարգացման ներուժը ուղղակիորեն պայմանավորված է սոցիալական և մշակութային գործոններով, փորձագիտական հարցումների, խորացված հարցազրույցների ու ֆոկլուս-խմբային հարցումների արդյունքում ստացավ իր հիմնավորումը:

*Գյուղի ամենամեծ խնդիրն էն ա, որ մարդ չի կարում իրա արտադրանքը արտահանի, իրացնի: Երկրորդ հերթին գյուղը պտի ունենա բոլոր նախադրյալները՝ տեխնիկա, գործարան, որ մարդիկ աշխատեն, կարան իրանց սոցիալական պահանջները բավարարեն: Հիմնականում պտի զարգացնեն գյուղատնտեսությունը, ապահովեն տեխնիկայով, սերմերով, ոռոգման խնդիրները լուծեն, էսօր ոռոգումը շատ լուրջ խնդիր ա: Էս տարի ոնց որ ըտենց մի քիչ շարժ կա, մարդիկ կարում են մի քիչ վարկ վերցնեն:*

*Բայց մարդիկ վարկը վերցնում են, չեն կարում տակից դուրս գան: Եթե պտի վարկ վերցնի, բայց չկարենա ապրանքը իրացնի, վարկը դառնում է անիմաստ: Դրա համար պտի առաջին հերթին իրացման համար պայմաններ ստեղծեն:*

*Մարդը որ արտադրում է, խնդիր ունի: Մտածում ա իրա ապրանքը որ հանի շուկա, նորմալ գին կապահովի, որ իրան շահույթ բերի: Հիմա մտավախություն կա սոխի հետ կապված: Մարդիկ շատ են արել ու վախենում են, որ սեզոնը գա, գին չի ունենա: Եթե հիսուն-վաթսուն դրամ դառավ, իրա ծախսն էլ չի հանի:*

#### **Ֆոկլուս-խմբային հարցում, Վայոց ձորի մարզ**

Մեջբերումը միջինացված ձևակերպումն է գյուղական բնակչության ընկալումների, պատկերացումների, ցանկությունների ու հնարավորությունների:

ՀՀ կառավարության քաղաքականությունը, որն իրականացվեց 2011թ., ուներ օրինակներով կոռպերացիայի առավելությունները ցույց տալու նպատակ:

Ֆոկլուս-խմբային և փորձագիտական հարցումները հնարավորություն տվեցին գրանցել այդ ճանապարհին առկա մեկ խոչընդոտ ևս: Հայաստանում դեռևս կայացած չէ գյուղմթերքների մանրամեծածախ շուկան: Երևանում նման գործառույթ ունեն <ԳՈՒՄ>-ի և <Մալաթիա>-յի շուկաները: Սակայն, շուկայի թույլ լինելը բերում է նրան,

որ հասկապես <ԳՈՒՄ>-ի շուկայից կարճ ժամանակում դուրս են մղվել գյուղաբնակ վաճառողները ու վերջիններիս փոխարինել են ապրանքը էժան գներով <բիրիքով> վերցրած դալալ-միջնորդ-առևտրականները, որոնց եկամուտը հաճախ ավելին է, քան արտադրողինը: Խնդրին բազմիցս անդրադարձել է նաև կառավարությունը, սակայն այն լուծում չի ստացել և ամենայն հավանականությամբ, չի ստանա, քանի որ քաղաքներում զանգվածային գործազրկության պայմաններում այս օղակը վերացնելը կնշանակի սոցիալական լարվածության նոր ու վտանգավոր օջախի առաջացում, ինչին իշխանությունները գնալ չեն կարող: Սրան հավելենք առաջիկա երկու համապետական ընտրությունները և պատկերը կամբողջանա: Արդյունքում դարձյալ որպես հիմնական այլընտրանքային տարբերակ հանդես է գալիս արտագնացությունը:

*Նպատակը որն է /արտագնա աշխատանքի – Մ. Գ./, աշխատանք ունենամ, կոնանամ ընտանիքս պահեմ: Ըստեղ օր աշխատանք էղնի, ես էս տարիքիս ինչ գործ ունիմ դսերը: Բայց դե հմի ստիպված նորից պտի էլնիմ էրթամ: Տիա հարևաններիցս մե էրկու հոգի չեն գնացել, էս քանի տարի է չեն կոնա տոկոսներից պրծնին: Մեր հետը մե հոկտեմբերյանցի տղեմ կար, երդում կերավ, օր էլ խոսան պտի չգա, ըսավ ախպեր, էս կերթամ իմ հողս կմշակեմ: Մե տարիմ չեկավ, էս տարի աշունքը էկավ, ըսի լավ օր էկար: Ըսավ մե տարիմ աշխատա, չկրնացա օր հարյուր հազար դրամ փող ետ գցեմ, փետ առնիմ:*

*Անհատական խորացված հարցազրույց, Շիրակի մարզ*

## **Հողերի խոշորացում և կոռպերացիա. քաղաքականություն ու փաստաթղթեր**

### *Հիմնական փաստաթղթեր*

Սոցիալ-մշակութային գործոնների ուսումնասիրությունից գատ, կոռպերացիայի և հողերի խոշորացման քաղաքականության ուսումնասիրության տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն քաղաքականության փաստաթղթերը: Հողերի խոշորացման և կոռպերացիայի քաղաքականության հիմնական դրույթները և հիմնական միջոցառումները ներկայացված են <Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգում>, որն ընդունվել է ՀՀ Կառավարության կողմից 2011թ. նոյեմբերի 3-ի նիստի թիվ 43 արձանագրային որոշմամբ<sup>27</sup> և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4 -ի N1476 -Ն որոշմամբ հաստատված <Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը>:

<sup>27</sup>Տե՛ս՝ [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/11/MAR43-6\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/11/MAR43-6_1.pdf) /վերջին այցելությունը 20.02.2012/

Հայեցակարգը սահմանում է ՀՀ-ում գյուղատնտեսության զարգացման հետևյալ տեսլականը. *«Գյուղացիական տնտեսությունների խոշորացման տեսլականը՝ մրցունակ ապրանքային տնտեսությունների ձևավորման ու զարգացման միջոցով, երկրի պարենային անվտանգության, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրությունում տնտեսավարողների բարձր կենսամակարդակի ապահովման հիմնախնդիրների աստիճանական լուծումն է: Սույն հայեցակարգի ընդունմամբ կստեղծվեն իրավական հիմքեր գյուղացիական տնտեսությունների խոշորացմանն ուղղված քաղաքականության հստակեցման, ինչպես նաև գործող փոքր չափերի գյուղացիական տնտեսություններին պետական աջակցության արդյունավետ մեխանիզմների ներդրման համար»<sup>28</sup>*: Նման ձևակերպումը նախանշում է գյուղատնտեսության զարգացման ու խթանման քաղաքականության երկու մոտեցում՝ *գյուղացիական տնտեսությունների խոշորացում և կոոպերացիայի տարբեր ձևերի խրախուսում և գործող փոքր չափերի գյուղացիական տնտեսություններին պետական աջակցության արդյունավետ մեխանիզմների ներդրում*:

Մինչև փաստաթղթերի բովանդակային առումներին անդրադառնալը, քննարկենք մեկ խնդիր, որը կարևոր է ինչպես կոնկրետ գործողությունների, այնպես էլ ռազմավարական պլանավորման տեսանկյունից:

Գյուղատնտեսության հանդեպ պետական քաղաքականության տարբեր փաստաթղթերում, /մասնակի բացառություն է <Կայուն զարգացման ծրագիրը>/ կիրառվում են գյուղական *բնակչություն, գյուղական համայնք, գյուղացիական տնտեսություն, գյուղատնտեսական արտադրությունում տնտեսավարող և այլ հասկացություններ*: Սա բնական է, քանի որ քաղաքականության փաստաթղթերում պետք է կիրառվեն իրավաբանական հասկացություններ և ձևակերպումներ:

Սակայն փաստաթղթերի հիմնական մասում բացակայում է մեկ շատ կարևոր մոտեցում. բացակայում է կամ բավարար ներկայացված չէ գյուղական բնակչությունը՝ որպես *սոցիո-մշակութային օրգանիզմ, քաղաքականության սուբյեկտ՝ սոցիալական, մշակութային, ունեցվածքային ու ժողովրդագրական բնութագրիչներով*: Սա թուլացնում է քաղաքականության հասցեականությունը և արդյունավետությունը:

Ներկայումս գյուղաբնակները կազմում են ՀՀ բնակչության շուրջ 35%-ը<sup>29</sup>: Չնայած գերազանցապես գյուղատնտեսության տարբեր ոլորտներում զբաղվածությանը, գյուղական բնակչությունը միատարր ու միամակարդակ չէ սոցիալ-ժողովրդագրական և սոցիալ-մշակութային տեսանկյուններից: Ավելին, որպես

<sup>28</sup> [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/11/MAR43-6\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/11/MAR43-6_1.pdf)

<sup>29</sup> ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունն առայժմ հրապարակել է միայն 2011թ. Մարդահամարի օպերատիվ տվյալները: Առաջիկա ամիսներին, մանրամասն տվյալների հրապարակմամբ, հնարավոր կլինի ունենալ նաև գյուղական բնակչության հիմնական սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների ամբողջական բնութագիրը:

արդյունք տարբեր գործընթացների /արտագաղթ, արտագնացություն, ճոճանակային միգրացիա, օտարվածություն գյուղատնտեսական զբաղմունքներից, ծնելիության գործակցի նվազում և այլն/ գյուղական բնակչության բնականոն զարգացումն ապահովող որոշ ցուցանիշներ ուղղակի հասել են վտանգավոր սահմանագծի<sup>30</sup>:

Ըստ այդմ, պետական քաղաքականության փաստաթղթերում պետք է տրվի ***առաջին հերթին ՀՀ գյուղական բնակչության մանրամասն ու տարբերակված սոցիալ-ժողովրդագրական բնութագիրն ու առանձնացվեն այն հիմնական թիրախները, որոնց ուղղված են քաղաքականության միջոցառումները:***

Այլապես <Հայեցակարգի> սահմանումներից մեկը՝ <...ինչպես նաև գյուղատնտեսական արտադրությունում տնտեսավարողների բարձր կենսամակարդակի ապահովման հիմնախնդիրների աստիճանական լուծումն է...> կարող է մեկնաբանվել երկակի, որովհետև հողերի խոշորացման ու կոոպերացիայի արդյունքը կարող է դառնալ ավելցուկային աշխատուժի արտահոսքը, իսկ տնտեսավարողների կենսամակարդակն էլ իրապես կարող է բարձրանալ...

Այսինքն, առկա է հակասություն կամ տարրնթերցման հնարավորություն այն պատճառով, որ հստակ ձևակերպված չեն թիրախները և հասցեական չեն գործողությունները:

Պետական քաղաքականությունը, հատկապես ռազմավարական փաստաթղթերը, պետք է հստակ պատասխանեն առնվազն մի քանի հարցի կամ նախանշեն դրանց լուծումները.

- ***գյուղական և քաղաքային բնակչության որ համամասնություն է օպտիմալ հանրապետության համար;***
- ***գյուղական բնակչության որ համամասնությունն է օպտիմալ ըստ գոտիականության և տարածաշրջանների;***
- ***սոցիալ-ժողովրդագրական ինչպիսի բնութագրիչներ ունեցող գյուղական բնակչություն է անհրաժեշտ պետությանը;***
- ***ինչպիսի մշակութային նկարագիր ունեցող բնակչություն է անհրաժեշտ պետությանը,***
- ***ինչպես է լուծվելու ողջ հանրապետության, նաև գյուղական բնակչության համար կարևորագույն խնդիրներից մեկը՝ ծերացման խնդիրը:***

Այս հարցադրումների ընդդիմախոսները կարող են հակադրվել, պնդելով, որ պետական քաղաքականության բոլոր փաստաթղթերում այս առումների ներառումը

---

<sup>30</sup> Ինչպես այս, այնպես էլ այլ հետազոտական ծրագրերով ՀՀ գյուղական բնակչության շրջանում անցկացրած ուսումնասիրություններով արձանագրվել է դպրոցականների թվի կրճատում գրեթե բոլոր համայնքներում: Վիճակը ծանր է հատկապես բարձրլեռնային, հեռավոր ու սահմանամերձ գյուղական բնակավայրերում: Որոշ գյուղերում խորհրդային վերջին տարիների համեմատությամբ դպրոցականների թիվը կրճատվել է չորսից-վեց և ավելի անգամ:

պարտադիր չէ կամ դրանք ձևակերպված են այլ փաստաթղթերում: Փաստերը, սակայն, ցույց են տալիս, որ առանց այս բազիսային հարցադրումների հստակեցման ու ռազմավարական պլանավորման, հողերի խոշորացման ու կոոպերացիայի խթանման քաղաքականությունը չի կարող արդյունավետ լինել: Հիմնական խոչընդոտներից մեկը, օրինակ, կարող է դառնալ որակյալ մասնագետների պակասը, ինչը կարող է լրացվել նպատակային քաղաքականությամբ միայն:

Ընդ որում, սա հարցադրումների մի մասն է միայն: Դրանք ցույց են տալիս, որ առանց առարկայական մոտեցումների, մեծ ու փոքր թիրախների առանձնացման, պետական քաղաքականությունը հաջողություններ արձանագրելու սահմանափակ հնարավորություններ ունի:

Այսպես, Հայաստանն այսօր ժողովրդագրական ճգնաժամի մեջ է: Ծնելիության միջին գործակիցը կազմում է 1.6 այն դեպքում, երբ պարզ վերարտադրության ապահովման համար այն պետք է կազմի 2.1: Լուրջ ժողովրդագրական խնդիրների առաջ են սահմանամերձ գյուղերը, որտեղից արտագաղթը, բացի տնտեսական բարդություններից, պայմանավորված է նաև անընդհատ վախով, ապագայի անորոշությամբ, երեխաների կրթության սահմանափակ հնարավորություններով: Պետական քաղաքականության փաստաթղթերում նշվում է, որ պետք է ապահովվի **սահմանամերձ գյուղերի առաջանցիկ զարգացումը**: Սակայն կոնկրետ միջոցառումներ ու քաղաքականության վերջնարդյունքներ հստակ չեն ներկայացվում: Չեն դրվում նաև կոնկրետ ժամկետներ՝ կոնկրետ արդյունքներին հասնելու համար: Իսկ ընդհանրական տերմինաբանության կիրարկումը նշանակում է նաև հետագա հնարավոր մանիպուլյացիաների հնարավորություն:

Այս հարցադրումները կարևոր են նաև այն պատճառով, որ գյուղատնտեսական քաղաքականությունը ենթադրում է գյուղատնտեսության վարման արդյունավետ մեթոդների, ժամանակակից ձևերի ու եղանակների ներդրում ու խթանում: Դա իրագործելու համար անհրաժեշտ է ունենալ կրթական, մասնագիտական պատրաստվածություն ունեցող կրիտիկական զանգված գյուղական միջավայրում: Հետազոտությունը փաստում է, որ կրիտիկական զանգվածը համայնքների հիմնական մասում բավարար չէ, ինչն ապացուցում է նաև ներքևից՝ ինքնակազմակերպման ճանապարհով խնդիրների լուծման փորձերի սահմանափակությունը<sup>31</sup>: Եթե հավելենք,

<sup>31</sup>Վերջին տասը տարիների ընթացքում Հայաստանում ստեղծվել են գյուղատնտեսական կոոպերատիվներ, որոնք գործում են Արարատի (16), Արմավիրի (18), Գեղարքունիքի (3), Սյունիքի (9), Վայոց Ձորի (28), Տավուշի (8), Լոռու (9), Կոտայքի (7), Շիրակի (1) և Արագածոտնի (7) մարզերում: Լավագույն արդյունքների է հասել գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիան (ԳԱՖ), որը միավորում է 21 կոոպերատիվ: Այդուհանդերձ գյուղատնտեսական կոոպերատիվների, հատկապես՝ սպառողական կոոպերատիվների ստեղծման տեմպերը շարունակում են մնալ անբավարար, ինչը սահմանափակում է գյուղացիական տնտեսությունների խոշորացման գործընթացը: Մանրամասն տես՝ Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգ, էջ

որ գրեթե զուգահեռ ընթանում է համայնքների խոշորացման նախապատրաստումը<sup>32</sup>, որը նույնպես գյուղական բնակչության բնութագրիչներով պայմանավորված գործընթաց է, ապա ակնհայտ է, որ պետական քաղաքականության մանրամասնեցումը կարևորագույն նշանակություն է ստանում:

Փորձագիտական և անհատական խորացված հարցազրույցների ընթացքում արձանագրվել է մեկ այլ մտահոգություն ևս, որն արդեն քննարկվեց վերը: Դա կապվում է խոշոր խաղացողների հնարավոր մուտքի ու մենաշնորհայնացման գործընթացների խորացման հետ: Վերջին տարիներին, որպես գյուղատնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման տարբերակ, քննարկվում է նաև նաև խոտհարքների ու արոտավայրերի վարձակալության կամ մասնավորեցման խնդիրը: Փորձագիտական դաշտում մտավախություն կա, որ արդյունքում, բացի երկրագործությունից, կուժեղանան նաև անասնապահության մենաշնորհայնացման միտումները:

Ինչպես <Հայեցակարգը>, այնպես էլ պետական քաղաքականության որոշ այլ փաստաթղթեր նման մտահոգությունների հիմքեր ստեղծում են: Դիտարկենք Հայեցակարգի չորս կետ.

- *արտոնյալ պայմաններով խոշոր ներդրողներին համայնքային սեփականություն հանդիսացող հողերը վարձակալությամբ տրամադրումը,*
- *ՀՀ հողային օրենսգրքում և հողային հարաբերությունները սահմանող այլ իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների (լրացումների) միջոցով գյուղատնտեսական հողատեսքերի ոչ նպատակային օգտագործման կամ ընդհանրապես չօգտագործման համար պատասխանատվությունը խստացնող դրույթների ամրագրմանը,*
- *գյուղատնտեսության ոլորտին ծառայություններ մատուցող կառույցներին (ջրօգտագործողների ընկերություններ, գյուղատնտեսության տեխնիկական սպասարկման կենտրոններ, վերամշակող կազմակերպություններ և այլն) ոչ նպատակային օգտագործվող կամ չօգտագործվող հողատարածքների գնման, կամ հատկացման մեխանիզմների մշակմանն ու կիրառմանը,*
- *համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, մեղիորացման կարիք ունեցող հողերը կադաստրային արժեքի 1/3-ով վաճառքին այն ներդրողներին, որոնք դրանք նպատակային օգտագործելու, մեղիորացնելու և ռեկուլտիվացիայի ենթարկելու*

16: Փաստորեն, կոոպերատիվների թիվը չի գերազանցում հարյուրը: [https://www.e-gov.am/u\\_files /file/ decrees/arc\\_voroshum / 11/MAR43-6\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files /file/ decrees/arc_voroshum / 11/MAR43-6_1.pdf)/վերջին այցելությունը 20.02.2012/:

<sup>32</sup>ՀՀ կառավարության 2011 նոյեմբերի 10-ի նիստի N 44 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել <Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը>:

պատրաստականություն կհայտնեն՝ առանձնահատուկ կարևորելով աղակալված (ալկալիացված) հողերի արտոնյալ պայմաններով ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրման մեխանիզմների մշակումը և ներդրումը.<sup>33</sup>

Առաջին կետում, անհասկանալի են կամ հստակ ձևակերպված չեն երկու առանցքային հասկացությունները՝ **արտոնյալ պայմաններ և խոշոր ներդրողներ**: Կարելի է ենթադրել, որ դրանք կհստակեցվեն այլ փաստաթղթերում: Նման ձևակերպումը, սակայն, անհավասար մրցակցային դաշտ է ստեղծում տնտեսվարողների համար և սահմանափակում է անհատական տնտեսությունների հնարավորությունները:

Երկրորդ կետը, որը վերաբերում է ոչ նպատակային օգտագործման կամ ընդհանրապես չօգտագործման համար պատասխանատվության դրույթների խստացմանը, ուղղված է մշակվող հողատարածքների ծավալների ավելացմանը և արդյունավետ կիրառման դեպքում կարող է տալ դրական արդյունքներ: Սակայն դարձյալ խնդրահարույց է հասկացության ձևակերպումը: Շատ դեպքերում հողերի չօգտագործումը կապված է ընտանիքների նյութական հնարավորությունների հետ և կարող է վերակազմվել միջոցների առկայության դեպքում: Մյուս կողմից, սա կարող է համարվել մասնավոր սեփականության իրավունքի խախտում, քանի որ օրենսդրորեն սահմանափակվում են սեփականատիրոջ իրավունքները: Ինչպես վարվել այն հողատերերի հետ, որոնք չմշակելով իրենց հողատարածքները պարտաճանաչ կերպով մուծում են հարկերը: Նույն վերապահումները կապված են ոչ նպատակային օգտագործում ձևակերպման հետ: Այս դեպքում, ըստ հայեցակարգի տրամաբանության, հողօգտագործողին պետք է ներկայացվեն մանրամասն մեթոդական ցուցումներ, թե որտեղ և ինչ կարելի է մշակել: Այլապես, կամայական մեկնաբանությունների հնարավորությունը կամայական որոշումների կայացման լայն հնարավորություններ է տալիս պետական պաշտնյաներին ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներին:

Երրորդ կետի պայմանները դարձյալ խոշոր խաղացողներին մեկնարկային առավելություններ են ապահովում, հատկապես եթե հաշվի առնենք դրանցից որոշների, հատկապես ջրօգտագործողների ընկերությունների որոշիչ դերը գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման ընթացքում և տնտեսությունների վրա ուղղակի ու անուղղակի ճնշումների հնարավորությունը:

Չորրորդ կետում դարձյալ կա նույն խնդիրը: Միջոցառումը ինքնին խրախուսելի է, քանի որ հնարավորություն է տալիս գյուղատնտեսական շրջանառության մեջ

<sup>33</sup> ՀՀ գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգ, էջ 11-13: [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/11/MAR43-6\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/11/MAR43-6_1.pdf) /վերջին այցելությունը 20.02.2012/:

վերադարձնել չօգտագործվող հողատարածքները: Սակայն անհասկանալի է վաճառքի գնի ձևակերպումը և այն, թե ինչպես ու ինչ հիմնավորումներով է կատարվելու ընտրությունը:

Գյուղատնտեսական գործունեության կազմակերպման և ռազմավարական պլանավորման հաջորդ փաստաթուղթը <Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարություն> -ն է<sup>34</sup>: Այս փաստաթղթում ևս գյուղատնտեսության զարգացման գերակայությունների շարքում նշվում են այն ուղղությունները, որոնք ներառված են նաև հայեցակարգում: Այսպես, Ռազմավարության կետ 10-ում նշվում է <Միջազգային փորձը վկայում է, որ տնտեսության մյուս ճյուղերի զարգացումը և գյուղատնտեսության ոլորտում ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառումը որպես կանոն հանգեցնում են տնտեսավարող սուբյեկտների թվաքանակի կրճատման, մեկ տնտեսության հաշվով հողատարածության մեծացման և ի հաշիվ աշխատանքի արտադրողականության բարձրացման՝ զբաղվածների թվի նվազեցման: Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում այս օրինաչափությունները դեռևս ցայտուն դրսևորումներ չունեն: Ուստի ագրարային ոլորտում կարևորվում է տնտեսվարման բազմաձևության և կամավորության սկզբունքով կոոպերացիայի զարգացման անհրաժեշտությունը: Ներկա էտապում փոքր հողակտորների վրա արդյունավետ տնտեսավարմանը պետք է նպաստեն ճյուղի սպասարկող ծառայությունների և շուկայական ենթակառուցվածքների ընդլայնումն ու մրցունակության բարձրացումը: Դա, կոոպերացիայի զարգացման հետ միասին, առկա դժվարությունների հաղթահարման ամենաարդյունավետ ուղին է: Հայաստանի Հանրապետության կառավարությունը հետևողականորեն իրականացնելու է գյուղական ենթակառուցվածքների զարգացման, ոռոգման համակարգերի կատարելագործման, հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, արոտավայրերի ջրարբիացման, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ կենտրոնացված պայքարի, և այլ կարևոր ծրագրեր>: Այսինքն, ինչպես այլ փաստաթղթերում, այնպես էլ այստեղ հիմնական գերակայությունները, ինչպես նաև միջոցառումները նույնն են: Նույնն են նաև այն առաջարկությունները, որոնք արդեն ներկայացվել են Հայեցակարգի քննարկման հետ կապված:

---

<sup>34</sup> Մանրամասն տես՝ Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարություն: [http://www.minagro.am/doc/agstrategy\\_arm3.pdf](http://www.minagro.am/doc/agstrategy_arm3.pdf):



*Իրական վիճակ, քաղաքականություն և ընկալումներ*

ՀՀ գյուղատնտեսական քաղաքականությունը, որպես ամբողջություն, փաստորեն դրսևորվում է երեք հիմնական հարթությունում, որոնցից յուրաքանչյուրում, ինչպես արդեն նշվեց, առկա են տարբեր հիմնախնդիրներ:

***Հարթություն առաջին քաղաքականության օրենսդրական բազա և հիմքեր, օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտեր:***

***Հարթություն երկրորդ քաղաքականության իրագործում նախարարությունների, գերատեսչությունների, մարզային կառույցների ու ՏԻ մարմինների կողմից՝ գյուղական բնակչության որպես ամբողջության զարգացման գերակայությունների և լոկալ ու տարածաշրջանային առանձնահատկությունների /սահմանամերձ գյուղական բնակավայրեր, բարձրլեռնային, հեռավոր գյուղական բնակավայրեր/ հաշվառմամբ***

***Հարթություն երրորդ քաղաքականության ընկալումները քաղաքականության սուբյեկտների/օբյեկտների կողմից, անհատական գյուղացիական տնտեսություններ, ֆերմերային տնտեսություններ, այլ տնտեսվարող սուբյեկտներ:***

Գյուղատնտեսական քաղաքականության, հատկապես հողերի խոշորացման ու կոոպերացիայի խրախուսմանն ուղղված օրենսդրական բազայի վերլուծությունը թույլ տվեց արձանագրել, որ, չնայած վերապահումներին, այն համապատասխանեցված է միջազգային ստանդարտներին ու չափանիշներին, նաև որպես արդյունք ՀՀ անդամակցությանը Առևտրի Համաշխարհային կազմակերպությանը, այլ միջազգային, այդ թվում՝ գյուղատնտեսական կառույցների ու կազմակերպությունների:

Օրենսդրության թերություններն ու բացթողումները, որոնք դիտարկվեցին վերը, համակարգային են և բխում են գյուղի, գյուղական բնակչության հիմնականում մեխանիկական, պարզեցված ընկալումներից, որոնք պետք է փոփոխությունների ենթարկվեն առաջին հերթին:

Բացի վերը վերլուծվածներից, ՀՀ-ում ագրարային քաղաքականությունը կարգավորվում է մի քանի այլ հիմնարար փաստաթղթերով:

Հիմնականներից մեկը ՀՀ Կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի թիվ 1207 որոշմամբ հաստատված **<Կայուն զարգացման ծրագիր>-ն է<sup>35</sup>**: Այն պետության տնտեսական ու սոցիալական քաղաքականության հիմնական փաստաթուղթն է և փոխարինել է ԱՀՌԾ-ին հիմնավորմամբ, որ ցուցանիշների և սոցիալ-տնտեսական գերակայությունների կատարումը եղել է առաջանցիկ տեմպերով: Ծրագրի 1.3 կետում, խոսելով <Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի> վերանայման և նոր ծրագրի ընդունման անհրաժեշտության մասին, որպես հիմնական փաստարկներ բերվում են հետևյալները.

<sup>35</sup> Մանրամասն տես՝ <Կայուն զարգացման ծրագիր>, Եր., 2008 /այսու՝ ԿԶԾ/:

• Կանխատեսվածից մոտ երկու անգամ բարձր աճի տեմպերը 2003-2006թթ. ինչպես նաև պետության ծախսային հնարավորությունների էական աճը բերել են նրան, որ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ԱՀՌԾ-ի նպատակադրումները և հիմնական ցուցանիշների արժեքները նկատելիորեն կգերազանցվեն, ինչը կտրուկ իջեցնում է ԱՀՌԾ-ի իրատեսության աստիճանը և, որպես երկրի երկարաժամկետ զարգացումը պայմանավորող հիմնական ռազմավարական ծրագիր՝ հետագա օգտագործման հնարավորությունը:<sup>36</sup>

Նշենք, որ դեռևս Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի մշակման, ինչպես նաև վերանայման գործընթացում բազմիցս հնչել են առարկություններ հրապարակված տվյալների ու նախատեսվող ցուցանիշների, ինչպես նաև մեթոդաբանության, հատկապես աղքատության հաշվարկման ցուցանիշների հետ կապված: Չնայած այս ամենին, էլքային այն ցուցանիշներն ու նպատակադրումները, որոնք ընկած էին ծրագրի հիմքում, դարձան ԱՀՌԾ վերանայման ու նոր նպատակների ու թիրախների առաջադրման պատճառ:

Գյուղատնտեսության մասով, անդրադառնալով քաղաքականության արդյունքներին, որոնք թույլ են տալիս արձանագրել ԱՀՌԾ-ից ԿԶԾ-ին անցման հիմքերը, նշվում է մասնավորապես հետևյալը. <Այսպիսով, գյուղական աղքատության առանձնահատկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ հաստատուն աղքատության գծի և աղքատության հաղթահարմանը միտված տնտեսական աճի պայմաններում, աղքատության մակարդակի տարբերությունները, որոնք պայմանավորված են գյուղական առանձնահատկություններով, արագ կրճատվում են, ծայրահեղ աղքատության խնդիրը գյուղում կարելի է համարել հիմնականում լուծված, և աղքատության կրճատման թիրախները գյուղական վայրերում միջնա- և երկարաժամկետ հեռանկարում էականորեն չեն տարբերվի քաղաքային վայրերի համապատասխան թիրախներից><sup>37</sup>:

Գյուղատնտեսական քաղաքականության գերակայությունները ԿԶԾ-ում հետևյալներն են.

- ԿԶԾ ծրագրային ժամանակահատվածում ագրարային ոլորտը՝ պետական ծախսային գերակայությունների շարքում դիտարկում,
- Պետական ռեսուրսների լայն օգտագործում գյուղատնտեսական ենթակառուցվածքների պահպանման և նորացման համար,
- Փոխառու ֆինանսական միջոցների մատչելիության ավելացում և գյուղացիական տնտեսությունների բանկային և այլ տիպի ֆինանսավորման հնարավորությունների ընդլայնում,

<sup>36</sup> Տե՛ս՝ ԿԶԾ, էջ 30-31:

<sup>37</sup> Տե՛ս՝ ԿԶԾ, էջ 56:

- Գյուղացիական տնտեսությունների սուբսիդավորման արդյունավետ համակարգի ստեղծում, որը պետք է հաշվի առնի գյուղատնտեսական գործունեության բնական պայմանները և **կարողանա ապահովել արդյունավետ գյուղատնտեսական արտադրությունը անբարենպաստ պայմաններում**,
- Գյուղատնտեսական մթերքների վերամշակող ոլորտի զարգացում, վերամշակող կազմակերպությունների արդյունավետ տեղաբաշխման, առաջավոր տեխնոլոգիաների ներդրման, արտադրանքի մրցունակության բարձրացման, մարքեթինգային աջակցության և հումք արտադրողների հետ պայմանագրային հարաբերությունների, գյուղական բնակավայրերում բնագավառի փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծման և ընդլայնման խթանում...
- Գյուղացիական տնտեսությունների համար պետական միջոցների մասնակցությամբ և պետական-մասնավոր համագործակցության սկզբունքների կիրառմամբ ռիսկերից ապահովագրման արդյունավետ համակարգի ստեղծում<sup>38</sup>:

Հայտարարված գերակայությունների և իրականացվող քաղաքականության համեմատության նպատակով բերենք պաշտոնական վիճակագրության մի քանի ցուցանիշներ: ԿԶԾ-ի՝ գյուղատնտեսության ոլորտի հիմնական գերակայություններից մեկը ձևակերպված է <Փոխառու ֆինանսական միջոցների մատչելիության ավելացում և գյուղացիական տնտեսությունների բանկային և այլ տիպի ֆինանսավորման հնարավորությունների ընդլայնում>: ՀՀ կառավարության 2011թ. Գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման մասին ՀՀ գյուղատնտեսության նախարարության հաշվետվությունում նշվում է <2011թ. մեծ աշխատանքներ են տարվել գյուղատնտեսությունում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին մատչելի պայմաններով վարկավորման ուղղությամբ: ՀՀ կառավարության կողմից հաստատված գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգին համապատասխան գյուղատնտեսության ոլորտին տրամադրվել են մատչելի տոկոսադրույքով (14 %-ով) վարկեր, որի 4 տոկոսային կեսը սուբսիդավորվել է պետության կողմից, իսկ առավել կարիքավոր 225 համայնքի համար սուբսիդավորվել է վարկերի տոկոսադրույքի 6 տոկոսային կեսը: Ծրագրի երկու փուլերով տրամադրվել է ավելի քան 25 հազ. միավոր վարկ՝ 17.4 մլրդ դրամ գումարով><sup>39</sup>:

<sup>38</sup> Տես՝ ԿԶԾ, էջ 143:

<sup>39</sup> Մանրամասն տես՝ ՀՀ կառավարության 2011թ. Գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման մասին ՀՀ գյուղատնտեսության նախարարության հաշվետվություն, էջ 7:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ մեծ է այս ծրագրից օգտվել ցանկացողների թիվը, հատկապես որ այլ վարկային ծրագրերը պարզապես չարիք են դարձել շատ գյուղացիական տնտեսությունների համար: Որոշ հարցազրույցների ընթացքում, սակայն, նշվում էր, որ վարկերը բաժին են հասել սահմանափակ թվով <արտոնյալների> կամ վարկային ծրագրի մասին հայտարարությունից մի քանի օր անց դիմելու դեպքում ասվել է, որ գումարը սպառվել է: Որոշ փորձագետների կարծիքով, այս վարկերը կարող են տրամադրվել նաև խոշոր խաղացողներին՝ տարբեր ձևակերպումներով: Այսինքն, միանշանակ դրական գործողությունը իրականացման ընթացքում արձանագրված թերությունների ու բացթողումների պատճառով արժանանում է ոչ միանշանակ գնահատականների: Որոշ հարցազրույցների ժամանակ նշվում էր, որ խնդիրներ կան նաև պետության կողմից տրամադրված սուբսիդիայի հաշվարկի մասով: Ընդունելով հանդերձ սուբյեկտիվ մոտեցումների ու տեսակետների հնարավորությունները, արձանագրենք, որ այնուամենայնիվ քաղաքականությունը ունի վերանայումների կարիք՝ թափանցիկության բարձրացման տեսանկյունից:

Մոտավոր հաշվարկներով մեկ միավոր վարկի միջին ծավալը կազմել է 696.000 ՀՀ դրամ: Որպես երկարաժամկետ վարկ, այն բավարար չէ գյուղատնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից, քանի որ պահանջվող ներդրումներն ավելին են, քան տրամադրվող գումարները: Որպես կարճաժամկետ վարկ՝ այն հնարավորություն է տալիս միայն միանգամյա ներդրում կատարել հիմնականում բուսաբուծությունում, քանի որ նման գումարով անասնապահության ոլորտ լուրջ ներդրումներ անել հնարավոր չէ:

ԿԶԾ-ում, որպես պետական քաղաքականության գերակայություն, նշված է նաև հետևյալը *<Գյուղատնտեսական մթերքների վերամշակող ոլորտի զարգացում, վերամշակող կազմակերպությունների արդյունավետ տեղաբաշխման, առաջավոր տեխնոլոգիաների ներդրման, արտադրանքի մրցունակության բարձրացման, մարքեթինգային աջակցության և հումք արտադրողների հետ պայմանագրային հարաբերությունների, գյուղական բնակավայրերում բնագավառի փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծման և ընդլայնման խթանում...><sup>40</sup>:*

2011թ. Գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման մասին ՀՀ գյուղատնտեսության նախարարության հաշվետվությունում բերվում են հետևյալ ցուցանիշները <- *Մշակվել և պտուղբանջարեղեն, խաղող ու կաթ վերամշակող ընկերություններին են տրամադրվել պտուղբանջարեղենի, խաղողի և կաթի գնումների պայմանագրերի օրինակելի ձևեր, առաջարկվել է դրանց հիման վրա*

<sup>40</sup> Տես՝ ԿԶԾ, էջ 143:

գյուղացիական տնտեսությունների հետ կնքել հումքի գնման պայմանագրեր և **հնարավորության սահմաններում վերջիններիս տրամադրել կանխավճար, սերմացու, պարարտանյութ, թունաքիմիկատներ կամ այլ օժանդակություն:**

-Մթերումների նախապատրաստման ուղղությամբ կատարված աշխատանքների ու ձեռնարկված միջոցառումների արդյունքում դրանք անցան բավականին կազմակերպված և առանց լուրջ խոչընդոտների, և վերամշակող ընկերությունները գնեցին **գյուղացիական տնտեսությունների կողմից առաջարկված գյուղատնտեսական մթերքների ողջ քանակությունը:**

- Հաշվետու տարում վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է շուրջ 51 հազ. տոննա բանջարեղեն, 14.3 հազ. տոննա պտուղ, որոնք գերազանցում են նախորդ տարվա մթերումների ծավալները համապատասխանաբար 1.7 և 3.9 անգամ:

- Խաղողի մթերումներն իրականացվել են շուրջ 40 ընկերությունների կողմից: Մթերվել է 128.9 հազ. տոննա հումք: Կարևոր է նաև այն փաստը, որ վերամշակող ընկերությունների կողմից ընթացիկ տարում խաղողի 1 կիլոգրամը գնվել է 130 դրամից ոչ պակաս գնով, միջին գինը կազմել է 132.0 դրամ՝ նախորդ տարվա 124.4 դրամի դիմաց:

- Հաշվետու տարվա գյուղատնտեսական մթերքների մթերումներն աչքի են ընկել վճարումների աննախադեպ մակարդակով: 2011թ. պտուղբանջարեղենի մթերումների դիմաց վճարումները կատարվել են ամբողջությամբ, իսկ խաղողինը՝ 99.7 տոկոսով:

2011 թվականին հանրապետությունից արտահանվել է 16.88 հազ. տոննա պտուղ-բանջարեղեն, որը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 35.2 %-ով:>

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը հրատարակել է 2011թ. ամփոփ տվյալները, համաձայն որոնց արձանագրվել է գյուղատնտեսության ցուցանիշների աճ նախորդ տարվա համեմատությամբ: Սա, ամենայն հավանականությամբ, վկայում է գյուղատնտեսության կայունացման, միաժամանակ՝ ճգնաժամի առավել խորքային ազդեցությունների աստիճանական հաղթահարման մասին: Ըստ տվյալների, գյուղատնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքը 2011թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին, դրամային արտահայտությամբ, կազմել է 838049.6 մլն. դրամ, անցած տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 114.3 տոկոսով: Առավել բարձր են աճի ցուցանիշները բուսաբուծության ոլորտում՝ 455999.3 մլն դրամ, աճը անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ 126.6 տոկոս<sup>41</sup>: Հաշվետու ժամանակահատվածում հանրապետությունում արտադրվել է պտուղ և հատապտուղ՝ 236.009.1տ, բանջարեղեն՝ 789.286.4 տ, խաղող՝ 229.589 տ:

<sup>41</sup> Մանրամասն տես՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Մամուլի հաղորդագրություն, ք. Երևան, 2 փետրվարի 2012 թվական. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 2011թ. դեկտեմբերի

Համադրելով արտադրության և մթերումների ծավալները, որոնց մասին խոսվում է Գյուղնախարարության հաշվետվությունում, ստացվում է, որ մթերող ձեռնարկությունները մթերել են արտադրված պտղի և հատապտղի ընդամենը 6 տոկոսը, իսկ բանջարեղենի՝ շուրջ 6.5 տոկոսը: Բարվոք է վիճակը խաղողի մթերումների ոլորտում. մթերվել է ավելի քան հիսունվեց տոկոսը: Հաշվետվությունում նշվում է, որ ձեռնարկությունները մթերել են գյուղացիական տնտեսությունների կողմից առաջարկված **ամբողջ ծավալը**:

Հետազոտության ընթացքում անցկացված ֆոկուս-խմբային հարցումների, ինչպես նաև անհատական խորացված հարցազրույցների արդյունքները թույլ են տալիս արձանագրել որոշ բարդություններ.

*...Բայց ժողովուրդը իրա բերքը չգիտի ինչ անի: Քյալամ են դրել, թափում են, նեխում ա, չի ծախվում, չգիտեն ինչ անեն, դրա մասին թող մտածեն: 15-20 տոննա քյալամը մնաց դաշտում, տվեցին անասուններին, թե չէ հա ծրագրեր մշակեք...*

*...Ես, օրինակ, էս տարի երևի ոչ մի բան չցանեմ, անգամ պայմանագիր ես կապում, խաբեբաներ են, չեն տալիս, ասում են էսքան փող կտաս կընդունեմ, սա երկիր չի, հավաքվեմ գնամ ստեղից: Գյուղի հիմնական խնդիրներն էսօր գների ու իրացման հետ են կապված:*

**Ֆոկուս-խմբային հարցազրույց, Արարատյան դաշտ**

Հաջորդ խնդիրը, որը բարդացնում է մթերման հնարավորություններն ու գործընթացի կազմակերպումը, կապվում է արդեն անհատական գյուղացիական տնտեսությունների մեծ քանակի և պայմանագրային պարտավորությունների կատարման ոլորտում առկա բարդությունների հետ:

*< ...Հաջորդ ուղղությունը Տավուշի մարզն է, որտեղից մթերում ենք հիմնականում հոն և մոշ, ընդ որում, ի տարբերություն նախորդ տարիների, տնտեսուն ընկած հոն ու մոշ էինք հավաքում, հիմա աշխատում ենք կոնկրետ պատասխանատուների հետ, ինչը մեծացնում է արդյունավետությունը, քանի որ քիչ մարդիկ պատասխանատվություն են կրում ավելի մեծ թվով մարդկանց պարտավորությունների կատարման համար: Հիմա օրեկան չորս-հինգ տոննա հոն ու մոշ ենք մթերում: Միայն այս տարի այս մոտեցումը հնարավորություն է տվել երկուսուկես անգամ ավելացնել մթերումների ծավալներն ու այս պահի դրությամբ /օգոստոս – Մ. Գ./ արդեն մթերել ենք այնքան, որքան անցյալ տարի:*

*Վերաբերմունքը խոշորացման ու կոոպերատիվների ստեղծման նկատմամբ միանշանակ դրական է: Դրանք պետք է կայանան ըստ շուտ, քանի որ առանց դրա գյուղատնտեսության նորմալ զարգացում ապահովել հնարավոր չէ: Մթերողին անհամեմատ ավելի ձեռնտու է հարաբերություններ ունենալ կոնկրետ մարդկանց հետ:*

**Փորձագիտական հարցում, մթերող ձեռնարկության տնօրեն, Արարատյան դաշտ**

Այս ոլորտում, փաստորեն, բարդությունները երկուստեք են. խնդիր ունեն ինչպես մթերող ձեռնարկությունները, այնպես էլ անհատական գյուղացիական տնտեսությունները, ինչի վկայությունն են նաև մթերման ցուցանիշները:

Դրանց նախնական, ընդհանրական վերլուծությունը հնարավորություն է տալիս թեկուզ ենթադրությունների ու կանխավարկածների մակարդակում արձանագրել մի քանի կարևոր ուղղություն.

Ա. Մթերման ծավալները շարունակում են մնալ անբավարար, բարդություններ ստեղծելով տնտեսությունների կայացման ճանապարհին,

Բ. Հայաստանյան շուկայի գնողունակության անկման պայմաններում գյուղացիական տնտեսություններն ունեն իրացման խնդիր: Ծանր է հատկապես Երևանից հեռու գյուղերի վիճակը:

Գ. Այս իրավիճակում հիմնական դերակատարները միջնորդ առևտրականներն են, որոնք ունեն մեկնարկային երկուստեք առավելություններ՝ որպես գին թելադրող և գյուղացու մոտ և շուկայում: Արդյունքում, արհեստականորեն բարձրացվում են գյուղատնտեսական մթերքների գները, չնայած, ըստ գյուղացիների վկայության, դրանք իրենցից ձեռք են բերվում ցածր գներով:

*<Քանջարեղենի իրացումն էլ է ահավոր: Կոնսերվի գործարաններում մարդիկ երեք-չորս օրով հերթ են կանգնում: Էսօր վերավաճառողը ավելի շատ փող է աշխատում, քան մենք: Քանդված <երազները> մի տարում դառան արտասահմանյան մեքենաներ, որովհետև իրենք են պայմաններ թելադրում: Քաղաքացին բողոքում է, որ ապրանքի գինը թանկ է, գյուղացին բողոքում է, որ էժան է, որովհետև վերավաճառողն է շատ փող աշխատում: Պոմիդորն ու վարունգը գոնե նորմալ պետք է մթերվեն, իսկ շուկայում գնային քաղաքականություն չկա: Պարզ հաշվարկ եթե անենք, տափանում, ջուր, ցանք, պարարտանյութ, քիմիկատ, կտեսնենք, որ արդյունքում եկամուտ չի մնում: Ջրի գանձումներն են թանկ: Տնամերձ հողամասի համար տալիս ենք տասնհինգ հազար, անկախ նրանից ինչ ենք ցանում, երկրորդ բերքի համար՝ դարձյալ տասնհինգ հազար: Պոմպակայանների տակի հողերում ընդհանրապես դաժան է: Ցորենի մեկ հա ջրելը, եթե հողը պոմպակայանի տակ է, մի ջուրը կարող է վրադ հիսուն հազար նստի: Դե հաշվեք, եթե երկու կամ երեք ջուր անես, ինչ թիվ է դուրս գալիս: Բայց հենց բերքահավաքը ավարտեցինք, միանգամից գները իջան՝ցորենն հիմա հարյուր քսանով է հավաքում, հետո գինը բարձրացնում է, էլի մեր վրա թանկ վաճառում>:*

*Անհատական խորացված հարցազրույց, Արարատի մարզ*

Ավելի խնդրահարույց է **երկրորդ հարթությունը**, այսինքն, պետական քաղաքականության իրագործումը տարբեր մակարդակներում: Քաղաքականությունը, ըստ իրականացված հետազոտության արդյունքների, կարելի է գնահատել որպես **ուժ հետևողական, շատ դեպքերում՝ դիպվածային կամ իրավիճակային**<sup>42</sup>:

<sup>42</sup>Մրա թերևս ամենախոսուն վկայությունը սեփականաշնորհումից հետո շրջանառության մեջ մտած և ցայսօր կենցաղավարող արտահայտությունն է. «-<ոչ թե հողը տվին գյուղացուն, այլ գյուղացուն տվեցին

Ագրարային քաղաքականության նման հիմքերը, մեր կարծիքով, պետք է փնտրել ՀՀ-ում առկա համակարգային ճգնաժամում:

Ցայսօր, չնայած պետական քաղաքականության տարբեր փաստաթղթերի գոյությանը, վերջնականապես հստակեցված ու բանաձևված չէ ՀՀ-ում **գյուղատնտեսության ու գյուղական բնակչության ռազմավարական ընկալումը, կերպի, տեսակի ու նկարագրի խնդիրը:**

Պատահական չէ, որ պետական քաղաքականության փաստաթղթերի մեծ մասում կամ գրեթե բացակայում է գյուղական բնակչության՝ որպես քաղաքականության սուբյեկտի ընկալումը, կամ այն բավարար չէ:

Սրա վկայություններից մեկը նաև հողերի խոշորացման ու գյուղատնտեսության ոլորտում կոռուպցիայի զարգացման քաղաքականության ակտիվացումն է՝ սկսած 2011թ.: Փորձագիտական հարցումներն ու գյուղական միջավայրում անցկացված ուսումնասիրությունները բացահայտում են ընկալումների ու մեկնաբանությունների երկու հարթություն՝

**ա. այս քաղաքականությունն նպատակ ունի նախապատրաստել հողերի խոշորացման այնպիսի գործընթաց, որը, վերջին հաշվով կհանգեցնի ապրանքային նշանակության հողատարածքների անցմանը օլիգարխիկ խմբերին ու խոշոր բիզնեսի ներկայացուցիչներին /ինչի վկայությունները արդեն կան հատկապես Արարատյան դաշտում ու Արմավիրի, Կոտայքի մարզերի ու այլ նախալեռնային շրջաններում, որտեղ պայմանները բարենպաստ են այգեգործության տարբեր ճյուղերի ու երկրագործության զարգացման համար/**

**բ. դրանք քաղաքականացված գործողություններ են, որոնք նպատակ ունեն համապետական երկու՝ խորհրդարանական ու նախագահական ընտրություններից առաջ ապահովել գյուղական բնակչության աջակցությունը: Որպես այս ամենի վկայություն հարցման ենթարկվածների կողմից բերվում էր չափազանց ակտիվ հանրային քարոզչությունը հատկապես հեռուստատեսությամբ:**

**գ. անցկացված հարցումները թույլ տվեցին արձանագրել ևս մեկ, սոցիալ-մշակութային տեսանկյունից իրողություն, որի հաղթահարումը չափազանց կարևոր է պետական քաղաքականության հաջողության տեսանկյունից: Նաև վիճակագրական տվյալները, որոնք բերվել են վերը, ցույց են տալիս գյուղական բնակչության մի ստվար հատվածի օտարվածությունը գյուղատնտեսությունից ու գյուղատնտեսական գործունեությունից: Այլապես, ՀՀ հողային օրենսդրությունը ու տնտեսական քաղաքականության ակտիվության խրախուսմանն ուղղված պետական**

---

հողին», որը, կարծում ենք, խտացված արտահայտությունն է գյուղական միջավայրում տիրապետող մոտեցումների ու պատկերացումների:



## **քաղաքականության փաստաթղթերը տալիս էին ներքնից խոշորացման ու կոռուպցիայի զարգացման հնարավորություններ:**

Այսինքն, հայտարարված քաղաքականության հաջողության ապահովման համար, ինչպես արդեն նշվեց տարբեր բաժիններում, կարևորագույն նշանակություն ունի ոչ միայն գերակայությունների հայտարարումը, այլ դրանց հասնելու նպատակների, միջոցառումների ու գործողությունների հստակեցումը: Անցկացված հետազոտությունը թույլ տվեց արձանագրել, որ առանց դետալացված ու մանրամասնեցված գործողությունների, գյուղում դրական տեղաշարժեր արձանագրելը կապված է բավականին լուրջ բարդությունների հետ:

## **Եզրակացություններ**

Հետազոտությունը հնարավորություն տվեց արձանագրել մի քանի կարևոր արդյունքներ, որոնք միաժամանակ նախանշում են հիմնական առաջարկությունների բովանդակությունն ու ուղղությունները:

- ՀՀ գյուղատնտեսությունը, չնայած իրականացված տարբեր միջոցառումներին, աջակցության տեղական ու միջազգային ծրագրերին, դեռևս շարունակում է մնալ խորքային, ըստ որոշ գնահատումների նաև համակարգային ճգնաժամի փուլում:
- Ցայսօր իրականացված միջոցառումները, գյուղատնտեսության ու գյուղական բնակչության աջակցության ծրագրերը մեծամասամբ եղել են դիպվածային, որոշ դեպքերում՝ չհամակարգված, հանգեցնելով ժամանակավոր, մարտավարական, բայց ոչ ռազմավարական լուծումների:
- Այս քաղաքականության հետևանքը գյուղական բնակչության շարունակվող արտագաղթն է, արտագնացությունը, ճոճանակային միգրացիան, որոնց ծավալները տազնապահարույց են: Միգրացիոն գործընթացներում ընդգրկված են հիմնականում երիտասարդ ընտանիքներն ու երիտասարդները: Առաջինների դեպքում արտահայտված են նաև անվերադարձ միգրացիայի միտումները: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ երիտասարդության համար գյուղում հաստատվելու ու գյուղատնտեսությամբ զբաղվելու համար միայն տնտեսական միջոցառումները բավարար չեն: Երիտասարդությունը շարժունակ միավոր է և որպես կանոն, հաստատվում է այն վայրերում, որտեղ բավարար են նաև սոցիալական ու մշակութային պայմանները, կան ինքնաիրացման հնարավորություններ: Հայաստանի համար նման այլընտրանքը հիմնականում Երևանն է, որտեղ կա ժամանցի, ինքնաիրացման ու սոցիալական շարժունության ավելի մեծ հնարավորություն: Ըստ

այդմ, պետական քաղաքականության հիմնական ուղղությունը պետք է լինի հատկապես երիտասարդության՝ գյուղում ամրապնդվելու գերակայությունը, առանց որի գյուղական միջավայրում առողջացում, ըստ էության, հնարավոր չէ:

- Կարևոր են սոցիալ-մշակութային ու հոգեբանական գործոնները, երբ նույնիսկ աշխատանքի առկայության դեպքում, գյուղը հեռանկարային չի համարվում կայացման, ինքնաիրացման, ստեղծագործական աճի հնարավորությունների տեսանկյունից:

- Ստեղծված իրավիճակը հանգեցնում է գյուղական միջավայրի ու գյուղական բնակչության սոցիալ-մասնագիտական միաստիպության աստիճանական խորացմանը. գյուղական բնակչություն այսօր չունի սոցիալ-մասնագիտական նախկին բազմազանությունը:

- Նման վիճակն ունի սոցիալ-մշակութային հետևանքներ և միաժամանակ պատճառներ: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ինստիտուցիոնալ զարգացման հիմքերի ապահովումը, այդ թվում գյուղական միջավայրում, հնարավոր է միայն քաղաքացիության ինստիտուտի կայացման պայմաններում: Գյուղական միջավայրում ստեղծված վիճակը չի ստեղծում նման հնարավորություն, քանի որ գոյատևման գյուղատնտեսության պայմաններում առաջնային են մեխանիկական, ոչ կառուցողական արժեքներն ու ինստիտուտները:

- Փոփոխությունները հանգեցրել են գյուղական բնակչության սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների փոփոխությունների, ըստ էության խախտված է ժողովրդագրական բնականոն զարգացումների ընթացքը:

- Վիճակն առավել սուր է հատկապես սահմանամերձ, լեռնային ու հեռավոր գյուղերում, որտեղ կրճատվել է բնակչության թիվը, վտանգվել են ժողովրդագրական հիմնական ցուցանիշները:

- Իրավիճակի վրա էական ազդեցություն ունեցավ նաև համաշխարհային ֆինանսական ճգնաժամը: Հանրապետության իշխանությունները ստիպված էին հրաժարվել գյուղատնտեսության ոլորտի որոշ նախաձեռնություններից ու գործողություններից, սահմանափակել տարբեր միջոցառումների իրագործումը:

- Հետազոտությունը հնարավորություն տվեց արձանագրել, որ բավարար չափով չեն օգտագործվել ճգնաժամի ընձեռած որոշ դրական հնարավորությունները: Խոսքը վերաբերում է հատկապես ուղղորդված ու մատչելի վարկային ծրագրերի իրագործմանը, որը հիմքեր կստեղծեր հողերի խոշորացման ու կոոպերացիայի՝ ներքևից եկող նախաձեռնությունների համար:

- Վերջին երկու տարիներին, որպես ճգնաժամի հաղթահարման ու գյուղատնտեսության առողջացման հիմնական տարբերակ հայտարարվեց հողերի խոշորացման ու կոոպերացիայի զարգացման քաղաքականությունը, որը, չնայած

փաստաթղթերում առկա հակասություններին ու բացթողումներին, որոշ նախնական դրական արդյունքներ ապահովել է: 2011թ. տեղաշարժերը դրա վկայությունն են:

- Չնայած դրական տեղաշարժերին, առկա են նաև լուրջ մտահոգություններ: Քաղաքականության փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ խոշորացման ու կոոպերացիայի քաղաքականության խրախուսումը կարող է հանգեցնել խոշոր խաղացողների մուտքին՝ արտոնությունների ու նախապատվությունների կիրառման արդյունքում: Նման պնդման հիմքեր տալիս են հատկապես Հայեցակարգում ամրագրված որոշ դրույթներ: Սա իր հերթին կնշանակի առանց այն էլ ծանր վիճակում գտնվող գյուղում աշխատուժի ավելցուկի ձևավորում, որը հանրապետությունում իրացման հնարավորություն չունի: Հետևաբար, որպես հիմնական այլընտրանք մնում են արտագաղթն ու արտագնացությունը:

- Պետական քաղաքականության փաստաթղթերում բավարար ուշադրություն չի դարձվում գյուղական բնակչության սոցիալ-ժողովրդագրական ու մշակութային բաղադրիչների ներկայացմանն ու վերլուծությանը կամ դրանք սահմանափակ են: Մինչդեռ հաջողություններ արձանագրվում են միայն այն դեպքում, թիրախ հիմնական խմբերը քաղաքականության արդյունքում օբյեկտից վերածվում են սուբյեկտի, ակտիվ, ստեղծագործական դերակատարի:

- Գյուղական բնակչության այսօրվա սոցիալ-ժողովրդագրական իրավիճակի պայմաններում սուբյեկտի վերածվելու ներուժը կասկածահարույց է հատկապես սահմանամերձ, հեռավոր ու լեռնային գյուղերի համար, որտեղ սոցիալ-տնտեսական բարդություններին ավելանում է փաստացի գոյատևումը արտակարգ իրավիճակում:

- Պատահական չէ, որ հետազոտությամբ արձանագրվեց թեական վերաբերմունք կոոպերացիայի ու հողերի խոշորացման նախաձեռնությունների հանդեպ: Հարցվողների մի մասը դրանք կապում էր առաջիկա ընտրությունների հետ, գտնելով որ նման միջոցառումներով ապահովվում են գյուղական բնակչության ձայները:

- Սոցիալ-մշակութային տեսանկյունից կարևոր է նաև գյուղացիության՝ հերթական փոփոխություններին անպատրաստ լինելը: Հողերի խոշորացման ու կոոպերացիայի խրախուսման քաղաքականությունը նշանակում է հողօգտագործման ձևերի ու եղանակների, ինչպես նաև գործունեության կազմակերպման սկզբունքների հերթական փոփոխություն վերջին երկու տասնամյակում: Հայաստանյան գյուղը, որը աչքի է ընկնում սոցիալ-մշակութային միատիպությամբ, հոգեբանորեն պատրաստ չէ առաջարկվող փոփոխություններին:

- Սոցիալ-հոգեբանական ու մշակութային տեսանկյունից կարևոր է նաև գյուղական բնակչության մի հատվածի անվստահությունը պետական քաղաքականության հանդեպ, ինչի հիմնավորումները, ըստ հետազոտության մասնակիցների բազմաթիվ են.

- ✓ ՀՀ արտաքին պարտքի ավելացում,
- ✓ տնտեսության մենաշնորհայնացում,
- ✓ ֆինանսների ու տնտեսության գերկենտրոնացում մայրաքաղաքում,
- ✓ անհամաչափ տարածքային զարգացում,
- ✓ բնակչության արտագաղթ ու արտագնացություն,
- ✓ ժողովրդագրական անբարենպաստ վիճակ ու զարգացումներ,
- ✓ աղքատության ու ծայրահեղ աղքատների տեսակարար կշռի աճ,
- ✓ բնակչության անվտանգություն վաղվա օրվա հանդեպ,
- ✓ երիտասարդության հիմնախնդիրներ:

Սրանք, ըստ էության, համակարգային ճգնաժամի ցուցիչներ են, հետևաբար, հատկապես փորձագետները որպես ստեղծված իրավիճակի հաղթահարման տարբերակ դիտում են համակարգային փոփոխություններն ու միջոցառումները:

## Առաջարկություններ

Նշված արդյունքները նախանշում են նաև հիմնական առաջարկությունները հետևյալ հարթություններում.

- ✓ ***Գյուղատնտեսական գործունեության կազմակերպման օրենսդրական, նորմատիվային դաշտ,***
- ✓ ***Պետական մարմինների ու ոլորտային պատասխանատուների քաղաքականություն,***
- ✓ ***Գյուղական բնակչության կոնկրետ ընկալումներ ու տեսլական:***

Ուսումնասիրությունը հնարավորություն տվեց արձանագրել, որ

✓ չնայած ագրարային քաղաքականության ու գյուղատնտեսական գործունեության կազմակերպման օրենսդրական դաշտը, ընդհանուր առմամբ, համապատասխանեցված են միջազգային ստանդարտներին ու նորմերին, այնուամենայնիվ քաղաքականության փաստաթղթերի որոշ դրույթներ ունեն պարտադիր վերանայումների ու հստակեցումների կարիք: <Կայուն զարգացման ծրագրի>, <Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարության>, <ՀՀ-ում գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգի> և այլ փաստաթղթերի դրույթներում հստակեցման և վերանայումների կարիք ունի հատկապես ՀՀ գյուղական բնակչության տեսլականը, որը, ըստ էության, ռազմավարական նշանակության խնդիր է:

✓ Նշված փաստաթղթերում անհրաժեշտ է ուժեղացնել ու մանրամասն ներկայացնել գյուղական բնակչության սոցիալ-մշակութային, տնտեսական ու ժողովրդագրական բնութագիրը՝ առկա հիմնախնդիրների, մարտահրավերների ու բարդությունների մատնանշմամբ, ինչը հնարավորություն կտա գյուղի ու գյուղական բնակչության զարգացումները տեղափոխել նաև ռազմավարական պլանավորման հարթություն:

✓ Կարևոր է դետալացված ներկայացնել տարածքային ու գոտիական հիմնախնդիրները: Փաստաթղթերում միայն մասնակի անդրադարձ է կատարվում դրանց, մինչդեռ դրանք ոչ միայն տնտեսական են, այլ նաև սոցիալ-մշակութային ու հոգեբանական: Գոտիական ու տարածքային առանձնահատկությունները պայմանավորում են ոչ միայն կյանքի որակը, այլ որակի մասին պատկերացումները և միայն տնտեսական ուղղվածության գործողություններով, նույնիսկ հողերի խոշորացմամբ հնարավոր չէ էական տեղաշարժ գրանցել գյուղական բնակչության կենսամակարդակում: Սահմանամերձ, բարձրլեռնային, հեռավոր գյուղական բնակավայրերը ունեն հաղորդակցության, ծառայությունների մատչելիության խնդիրներ: Այսինքն, գյուղի ու գյուղատնտեսության զարգացման ծրագրերը, այդ թվում կոոպերացիայի ու հողերի խոշորացման նախաձեռնությունները պարտադիր մաս պետք է կազմեն համալիր ու համակարգային փոփոխությունների ընդգրկուն ծրագրի, որը, ըստ փորձագիտական հարցումների, այսօր դեռևս առկա չէ:

✓ Պետական քաղաքականության փաստաթղթերը հստակ պետք է նշեն այն բացասական հետևանքները, որոնք կարձանագրվեն հողերի խոշորացման ու կոոպերացիայի խրախուսման արդյունքում: Հիմնական խնդիրը վերաբերում է աշխատուժի ավելցուկին ու վերջինիս զբաղվածության ապահովմանը: Փաստաթղթերում որպես լուծում առաջարկվում է ոչ գյուղատնտեսական զբաղվածություն ունեցողների կշռի ավելացումը: Ձևակերպումը, սակայն, հստակ չէ, ամրագրված չեն կոնկրետ թվային ցուցանիշներ, հստակեցված չեն, թե ինչպիսին պետք է լինեն ոչ գյուղատնտեսական զբաղվածություն ապահովող ոլորտները, ինչպիսի զբաղվածություն և ինչպիսի տևողությամբ պետք է ապահովվեն դրանք: Այսօր մթերող ու վերամշակող ձեռնարկությունները կենտրոնացած են Երևանում ու մերձակա տարածքներում: Ֆինանսական ճգնաժամը, աղքատության տեսակարար կշռի աճը, բնակչության գնողունակության նվազումը, ինչպես նաև այլ ազդակները հիմքեր են տալիս ենթադրել, որ առաջիկայում փոփոխություններ դժվար է ակնկալել: Հետևաբար, գյուղատնտեսությունը, ինչպես նաև արդյունաբերությունը չեն կարողանա կլանել աշխատուժի ավելցուկը, որը կձևավորվի որպես արդյունք հողերի խոշորացման: Հիմնական տարբերակ դառնում է բնակչության արտահոսքը, ինչն ավելի կխորացնի գյուղի առանց այն էլ ծանր վիճակը: Հետևաբար,

քաղաքականության փաստաթղթերում պետք է ոչ միայն հստակ նշվեն այլընտրանքային կամ ոչ գյուղատնտեսական զբաղվածության ծավալները ըստ ոլորտների, ըստ մարզերի ու գոտիների, այլև տրվեն դրանց ապահովման ֆինանսական ու այլ հիմնավորումները:

✓ Պետական քաղաքականության փաստաթղթերում բացի ընդհանուր գոտիական ու տարածքային առանձնահատկություններից, պետք է հստակ հիմնավորվի առավել ռիսկային գոտիների հանդեպ պետական քաղաքականությունը: Նման ռիսկային գոտիները հանրապետությունում մի քանիսն են՝ սահմանամերձ գոտի, Բարձրլեռնային ու հեռավոր գյուղական բնակավայրեր: Այս գոտիները ունեն կարևոր ռազմավարական նշանակություն, սակայն դրանցում հիմնախնդիրների հիմնական մասը շարունակում է մնալ չլուծված: Միայն պետական նպատակային քաղաքականությունը հնարավորություն կտա ապահովել այս գոտիների համաչափ զարգացումը ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալ-մշակութային տեսանկյուններից: Սա իր հերթին նշանակում է, որ պետական քաղաքականության փաստաթղթերում առանձին պետք է դիտարկվի առնվազն սահմանամերձ գոտին ոչ թե սոսկ ընդհանրական նկարագրությունների, այլ կոնկրետ քաղաքականության ու գործողությունների մակարդակում:

✓ Պետական քաղաքականության փաստաթղթերում, վերանայումների արդյունքում պետք է հստակեցվեն ագրարային քաղաքականության հիմնական թիրախ խմբերը: Առկա փաստաթղթերում, դրանք, որպես կանոն, անհատական գյուղացիական տնտեսություններն են կամ տնտեսավարող սուբյեկտները: Նման ձևակերպումը չի արտացոլում գյուղական բնակչության սոցիալ-ժողովրդագրական ու մշակութային ողջ բազմազանությունը: Որպես պետական քաղաքականության հիմնական թիրախներ պետք է առանձնացվեն առաջին հերթին երիտասարդությունը և երիտասարդ ընտանիքները, որոնք էլ պետք է դառնան ստեղծագործական փոփոխությունների ու գյուղական միջավայրի առողջացման հիմքը:

✓ Պետական քաղաքականության փաստաթղթերում և հատկապես <Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգում> խնդրահարույց են հատկապես նախատեսված այն արտոնություններն ու մեկնարկային առավելությունները, որոնք տրվում են խոշոր ներդրողներին: Սա նշանակում է անհատական գյուղացիական տնտեսությունների ոչ միայն ֆինանսական հնարավորությունների վատթարացում, այլ նաև միգրացիոն տրամադրությունների ակտիվացում:

✓ Հայեցակարգում մանրամասն նշվում են կոոպերացիայի ու հողերի խոշորացման պայմաններն ու գործողությունները: Դրանք, ըստ էության, ընձեռում են տեղում նախաձեռնությունների ձևավորման ու զարգացման հնարավորություններ:

Մակայն, սխալներից ու բացթողումներից խուսափելու համար կարևոր է նախապատրաստական աշխատանքների համակողմանի իրականացումը՝ տեղական, նույնիսկ համայնքային առանձնահատկությունների հաշվառմամբ:

## Գրականություն և հիմնական փաստաթղթեր

1. Ծրագիր <Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության գործունեության>:
2. ՀՀ կառավարության 2010թ. գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման մասին ՀՀ գյուղատնտեսության նախարարության հաշվետվություն:
3. ՀՀ Կառավարության 2010թ. նոյեմբերի 4 թիվ 1476-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին: [http://www.minagro.am/doc/agstrategy\\_arm3.pdf](http://www.minagro.am/doc/agstrategy_arm3.pdf):
4. ՀՀ-ում գյուղատնտեսության զարգացման և ազատ տնտեսական գոտում թարմ մթերքների արտահանման բիզնես-մոդել:
5. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության գործունեության գործունեության ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին:
6. ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 10-ի նիստի թիվ 44 արձանագրային որոշումը համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը հաստատելու մասին:
7. Հավելված թիվ 4 ՀՀ կառավարության 2011թվականի հունվարի 13-թիվ 111 որոշման <Հիմնավորումներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի գերակա խնդիրների>:
8. Հավելված ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 30-ի նիստի թիվ 25 արձանագրային որոշման <ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգը>:
9. Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների զարգացման հայեցակարգը:

10. Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում ըստ աշխատանքների կատարման բյուջետավարման հայեցակարգ:
11. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության 2010թ. տարեկան զարգացման զեկույցը:
12. *Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2011. Էջ 110:*
13. ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի հարցազրույցը: [http://www.gov.am/am/inter\\_views/1/item/3130/](http://www.gov.am/am/inter_views/1/item/3130/):
14. ՀՀ կառավարության 2 փետրվարի 2012թ. 75-Ն որոշումը <ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու և ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու մասին>: <https://www.e-gov.am/gov-decrees/item/20858/>:
15. ՀՀ կառավարության 2 փետրվարի 2012թ. 88-Ն որոշումը <ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու և ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 22-ի 1802-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին>: [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/kar/2012/02/12\\_0088.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2012/02/12_0088.pdf):
16. Մ. Գաբրիելյան, Հասարակական և մշակութային փոփոխությունները ՀՀ արդի գյուղում /թեկնածուական ատենախոսության սեղմագիր/, Եր., 2001:
17. Մ. Գաբրիելյան, Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, Եր., 2001:
18. ՀՀ կառավարության 2010թ. գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման մասին ՀՀ գյուղատնտեսության նախարարության հաշվետվությունը, էջ 1-2: [www.minagro.am](http://www.minagro.am)
19. Վ. Հայկազյան, Հայաստանի գյուղատնտեսության խնդիրները և զարգացման հեռանկարները:
20. ՀՀ գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգ, էջ 11-13: [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/11/MAR43-6\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/11/MAR43-6_1.pdf) /վերջին այցելությունը 20.02.2012/:
21. Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարություն:
22. ՀՀ կառավարության 2011թ. Գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման մասին ՀՀ գյուղատնտեսության նախարարության հաշվետվություն:



23. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Մամուլի հաղորդագրություն, ք. Երևան, 2 փետրվարի 2012 թվական. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 2011թ. դեկտեմբերի ամսական և 2011թ. հունվար-դեկտեմբերի տարեկան արդյունքները բնութագրող հիմնական ցուցանիշները: